Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը:
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.:
Առանձին համարը 7 կոպէկ:

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Կենդրոնական գրավաճառանոցում»:

Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Арцзаганкъ“.
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang“.

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբ. բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարվում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲԱՑՈՒԱԾ Է 1898 ԹՈՒԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆԵՒԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Բաժանորդագրութիւնն ընդունվում է, ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վերիամինսկի փողոց, № 22, տուն Խանդամիրեանի) և «ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ, ԿԷՍ ՏԱՐՈՒԱՆԸ 6 ՌՈՒԲԼԻ

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն՝ Тифлисъ. Редакція „Арцзаганкъ“. իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction du journal arménien „Ardzagang“

Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով:

1898-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԸ

Այն անձինք և հաստատութիւնները, որոնք ԱՅԺՄԷՆ ԻՍԿ կըստորագրուին 1898 թուի „ԱՐՁԱԳԱՆՔԻՆ“, կը ստանան համարները ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԵԼՈՒ ՕՐԻՑ՝ վճարելով ընդամէնը տասը ռուբլի:

ԶԱՔԱՐ ԳԷՈՐԳԵԱՆԸ իր որդոց հետ՝ ՀՌԻՓՍԻՄԷ, ՅԱԿՈԲ ՃԱՀՆԱԶԱՐԵԱՆՆԵՐԸ իր քոյրերի հետ, խորին վշտով յայտնելով առաջինը իր սիրելի և անմոռանալի ամուսնու, երկրորդը իր թանկագին դստեր, իսկ վերջինները իրանց ամենասիրելի քրոջ

ՀԵՐԻՔՆԱԶ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ԳԷՈՐԳԵԱՆԻ

մահը, խնդրում են իրանց ազգականներին և ծանօթներին շնորհ բերել յուղարկաւորութեան, շաբաթ, նոյեմբերի 8 ին, առաւօտեան 10 ժամին, իր բնակարանից, Անչիսխատի եկեղեցւոյ ձախ պատի դիմաց Զուբինվի տուն, դէպի Ջգրաշէնի ս. Աւետեաց եկեղեցին: Ամբիծը կըկատարուի այսօր, երեկոյեան 5 ժամին, թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը: (1—1)

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ՆԱՏԱԼԻԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ՄՆԱՑԱԿԱՆ ԵՒ ԿՈՍՏԱՆԴԻՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑՆԵՐԸ խորին վշտով յայտնելով—առաջինը իր թանկագին ամուսնու, երկրորդը և երրորդը իրանց անմոռանալի հօր

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ

մահուան մասին, խնդրում են ազգականներին և ծանօթներին շնորհ բերել յուղարկաւորութեան հանդիսին, իր բնակարանից, որ գտնվում է Օրբէլեան փողոցի վրայ, № 1, Քամոյեան ս. Գէորգ եկեղեցին, Կիրակի նոյեմբերի 9 ին, առաւօտեան ժ. 10-ին: Հոգեհանգիստ կատարվելու է շաբաթ, ժամի 6-ին երեկոյեան:

ԹԻՖԼԻԶԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
Անտրեպրիզ Վ. Լ. ՓՈՐԿԱՏՏԻԻ
Ուրբաթ, նոյեմբերի 7-ին
Օպերային արտիստների ընկերութիւնը կըներկայացնէ

ՊԻԿՈՎԱՅԱ ԴԱՄԱ

Մասնակցողներ.—Օր. օր. Պապայեան, Տիմանինա, Կարամզինա Ժուկովսկայա, Կաբեննինա-Ֆինկելովա, պ. պ. Արցեմովիչ, Վինոգրադով, Կամիօնսկի, Բոլշակով, Գեցեվիչ և այլք:

Երաժշտապետ Ի. Գ. ՊԱԳԱՆԻ.
Բալէտը կըդնէ տիկ. ՋՕՎԱՍՍԻ
Օր. Լինչեվսկու մասնակցութեամբ:
Ռէժիսեօր Ի. Ե. ՓԻԹՈՅԵՎ:

ՍԿԻԶԲՆ Է 8 ԺԱՄԻՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ

Աղդ.—Վաղը ի յիշատակ Ա. Գ. Ռուբէնշտէյնի կըտրուին տեսարանները «Դեմօն» օպերայից: Մասնակցողները օր. օր. Պոլիտովա, Ձպերլինգ, պ. պ. պ. Արցեմովիչ. Կամիօնսկի, Գօրեայինով, Գադաննիօ և ուրիշներ: 13 նոյ. արտիստուհի Ս. Ե. Գլազունովի բենեֆիսը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գերմանական - հայկական բար. ընկերութեան գործունէութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Բծաւոր տիֆ գաղթականների մէջ: Յանձնաժողով հայ գաղթ. օգնելու: Յով. Մարտիրոսեանի մահը: Թիֆլիզի բազմարուեստեան դըպրոցը: Գիւղական ոստիկանութեան բարեփոխումն: Ժանտախտ Ռուսիայի սահմաններում: Կառավարչապետի նուէրը ռուս. բար. ընկերութեան: Մետեխի բերդի հայ եկեղեցու տօնը: Լազարեան ճեմարանի տարեդարձը: Ղարսի երկաթուղին: Բորժոմի երկաթուղու գիծը: Անասունների ժանտախտը: Թիֆլիզի ոստիկանական բաժան. գիւանների վերաքննութիւնը: Մոսկուայից: Արժէթղթեբից առնուած հարկը: Մկրտ. Սունդուկեանցի բժշկ. քննութիւնը: Նաւթային արդիւնաբերութիւնը օտարների ձեռքում: Ռուսաստանի փոստը: Ռուս հոգև. կանանց օգնաճառութիւնը: Հայկական ներկայացումները Թիֆլիզում: Բագուի հայ թատրոնը: Արզրումին կաթոլիկ կղերը:

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ.
ՓԷԼԻԵՏՕՆ.—Մի էսթէտիքական յիշողութիւն:—Դէպի Ս. Գէորգ:
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ-ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

—

Մինչև այժմ շատ քիչ տեղեկութիւններ են հաղորդուել մամուլի էջերում այն բարեգործութեանց մասին, որ կատարվում են Գերմանիայում յօգուտ Թիւրքիայի հպատակ թշուառ հայերի: Այժմ «Frankfur. Zeitung»-ը շատ հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում Գերմանական բարեգործ. կոմիտեի գործունէութեան մասին, յօգուտ հայերի: «Կ. Պոլսում և Թիւրքիայի գաւառներում տեղի ունեցած սոսկալի հայկական կոտորածը — գրում է «Frankf. Zeit.»—ինչպէս յայտնի է, առիթ տուաւ Գերմանիայում հաստատելու հայերին օժանդակելու մի ընկերութիւն, որի կենդրոնական վարչութիւնը գտնվում է Ֆրանկֆուրտում (Մայնի վրայ) եսանգուն պաստոր Լախմանի ղեկավարութեան տակ: Նոյն տարին այդ ընկերութեան կողմից իբրև պատգամաւոր Կ. Պոլիս գնաց կոմսուհի Ֆօն-Գրեբըն: Կոմսուհին բնակութիւն հաստատելով Սկիւտարում, կարճ ժամանակի ընթացքում՝ իր տանն ապաստանարան բացաւ քառասուն հայ որբ երեխաների համար և ապա ընկերութեան յանձնարարութեամբ մի Գերմանական - հայկական որբանոց հիմնեց Բեբէկ գիւղում, որ գտնվում է Վօսփորի գերմանական ափում: Այդ նպատակով գնուեց մի տուն, եկեղեցիով հանդերձ, որ առաջ պատկանում էր անգլիացիներին և կառուցուած է առողջարար օդ ունեցող բարձրավանդակի վրայ: Կոմսուհու Գերմանիա վերադառնալուց յետոյ, որբանոցը կառավարելու հոգսն իր վրայ առաւ պաստոր Բրօկէսը: Մինչև այդ ժամանակ Բէբէկի որբանոցում խնամւում որբերի թիւը հասել էր արդէն հարիւրի: Այդտեղ երեխայք ստանում են տարրական կատարելապէս գործնական ուսումն և Կրօնագիտութիւն են սովորում հայ քահանաներից: Բացի դրանից պաստոր Բրօկէսն ամեն օր կրօնական, բարոյախօսական զրոյցներ է անում. իսկ կիրակէ օրերն կատարւում է ժամերգութիւն, որին ներկայ են լինում բոլոր երեխայք առանց դաւանութեան խտրութեան: Առ հասարակ պաստոր Բրօկէսը իր տուած կրթութեան իբրև հիմք՝ ընդունում է քրիստոնէական գաղափարը, խոյս տալով կրօնական խըտրութիւններից: Այդ պատճառով էլ հայոց պատրիարքը Բեբեկի որբանոցին ցոյց է տալիս ամեն պաշտպանութիւն և այդ բարեգործական հաստատութեան վերաբերվում է վստահութեամբ և ամենայն համակրութեամբ: Փոքր-Ասիայում ապրող հայերի վիճակը թեթևացնելու նպատակով, նոյն տեսակ բարեգործական հիմնարկութիւն է հաստատուած նաև Մարաշում, ուր այդ հաստատութեան կառավարիչներն են երիտասարդ գերմանացի բժիշկ, դօքտօր Գիւլէ, ուսուցիչ Էնման և Ազրոնոմ Ցիմմեր և դրանց ջանքերի շնորհիւ կէս տարուան ընթացքում զանազան տեղերում ապաստարաններ են շինուած հայ մանուկների համար, որոնք և ազատուած են ծանր չքաւորութիւնից:

Դրանով չշատանալով, Ֆրանկֆուրտի գլխաւոր գերմանական-հայկական օժանդակիչ կոմիտեն մտադիր է փոքր Ասիայում ձեռք բերել հող և այնտեղ բնակեցնել գերմանացի գաղթականներ, որոնք կարող լինէին հայերի հետ միասին գաղութ կազմել: Այդ նպատակի իրագործման համար, կոմիտեն իր կարգադրութեան տակ կանխիկ միջոցներ ունի. սակայն հազիւ թէ նա կարողանայ իրականացնել այդ նպատակը, որին անշուշտ չէ կարող համակրել Թիւրք կառավարութիւնը քաղաքական դիտումներով, երկիւղ կրելով թէ հայ հալածեալները այդպիսի պայմաններում կարող են Գերմանիայի պաշտպանութիւնը գըտնել և ժամանակին Թիւրք երկրագործների դէմ վտանգաւոր մրցողներ հանդիսանալ: Եթէ վերջին կոտորածներն առաջացել են Թիւրքիայի սոցիալական վատթար վիճակից, ուրեմն կարելի է հաստատապէս նախագուշակել թէ Թիւրք ագրարականութիւնը շուտով վերջ կդնի նոր «կոլոնիային» իր կողոպուտներով, սպանութիւններով, և հրդեհներով: Բացի դրանից, պէտք է ի նկատի առնել և այն, որ Թուրքիայի հայաբնակ գաւառներից ոչ մէկում չկան գերմանական հիւպատոսներ: Եթէ նոյն իսկ Ներքին Ասիայում, ուր կան հիւպատոսարաններ, կարելի չէ լինում միշտ յուսալ պաշտպանութիւն գտնելու, ուրեմն այդ աւելի հնարաւոր է հիւպատոսներ չեղած տեղերում: Ուստի, գէթ նախազգուշութեան զգացմունքից դրդուած՝ գերմանական կառավարութիւնը պարտաւոր է թոյլ չտալ, որ իրականանայ կոլոնիա հիմնելու միտքը և խորհուրդ տալ հայերին նպաստող ընկերութեան՝ ընդարձակել Բէբէկի որբանոցը և նոյն տեսակ նոր կըրթական հաստատութիւններ հիմնարկել:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մենք արդէն հաղորդել էինք թէ Հալաբարում բնակուող հայ գաղթականների մէջ երևացել է բծաւոր տիֆ հիւանդութիւնը: Բարեբաղտաբար մինչև այժմ այդ ծանր և վարակիչ ցաւով հիւանդացել են երկու գաղթականներ, որոնք ուղարկուել են Թիֆլիզի Միքայէլեան հիւանդանոցը, իսկ նրանց բնակարանը և բոլոր զգեստները ենթարկուած են ախտահանութեան: Գաղթականներին օժանդակելու նպատակով կազմուած յանձնաժողովը ի նկատի ունենալով այդ վտանգաւոր հիւանդութեան վարակիչ յատկութիւնները, անմիջական միջոցներ է ձեռք առել նրա տարածման առաջն առնելու նպատակով:

* *
*

Թիֆլիզի նահանգապետի ամուսին տիկին Բեկովայի նախագահութեամբ կազմուած յանձնաժողովը հայ գաղթականներին օգնելու համար, յանձնարարել է 7 րդ քաղաքամասի ոստիկան-

ՖԵԼԻԵՏՕՆ

ՄԻ ԷՍԹԵՏԻՔԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ ՀԱՆՃԱՐԵՂ ՄԱՐԴՈՒ ՄԱՍԻՆ

—

(Յ. Այվազովսկու՝ սեպտեմբերի 26-ի յօբելեանի առթիւ)

Հա՛, չքեղ էին Ղրիմու ափեր.
Դողդոջ հայելու հարթութեան միջից
Բարձրանում էին Տաւրիդու լեռներ՝
Ինչպէս բիւրեղներ նուրբ, հրաշալի...

1888 թուի սեպտեմբեր ամիսն էր, երբ ես Բաթումի նաւահանգստից «Կոռնիլով» շոգենաւով մեկնեցայ, նաւահանգստի վրայ թողնելով հօրս, որ եկել էր ինձ ճանապարհ դնելու... Մթնշաղը վրայ հասաւ և ծովային մէգը ծածկեց իմ աչքերից թէ նաւահանգիստը, թէ իմ ծնողիս, որի ձայնը դեռ կանչում էր ինձ: Տխուր զգացմունք էր տիրապետել հոգուս վրայ. երիտասարդութեան վառ հասակիս մէջ ես առաջին անգամ հեռանում էի Կովկասից, նորից թողնում էի հայրենական սիրելի ծննդավայրը՝ Երևանը և իմ ծերունի ծնողիս, որին այնուհետև մէկ անգամ միայն բաղդ ունեցայ տեսնելու...

Գիշեր էր. պարզ, ծովային գիշեր. Ես առանձնացել էի տախտակամածի վրայ մի անկիւն, ղեկի մօտ, ուր շոգենաւը փրփուր էր դուրս տալիս, որ օձապտոյտներով տարածվում էր հեռու, հեռու ծովի մէջ... Ալիքների ծփալը և խաղը, ծովային լռութիւնը, աստղերի, ծովային աստղերի փայլփլալը,—այդ բոլոր ինձ մի զգացմունքի էր համակում, հայրենիքիս զգացմունքի, հայրենիքս էին յիշեցնում: Նա հեռու էր մնացել ինձանից և քանի շոգենաւը հեռանում էր, այնքան սրտիս կարօտը բորբոքւում էր և զգալի դառնում...

Սակայն պայծառ առաւօտը առաջս բացեց Սև ծովի գեղեցկատեսիլ ափերը. ահա Սուխում—Կալէնիր, մութ ու լուրթ կիպարիսներով, Սօչին, Աքօնի մենաստանը իրանց ծառաստաններով և անտառներով, որ կապոյտ տարածութեան մէջ նկարվում են, Անապայի փոքրիկ հրուանդանը՝ փարոսով... այնուհետև իմ ճանապարհորդութեանս հետեւեալ օրերը ես հետզհետէ տեսայ Ղրիմու ծովաքաղաքները և նրա հրաշալիքները կազմող տեսարանները,—Կերչ, Թէոդոսիա, Ետլտա, Սևաստապոլ. սիրուն Այ-Դաղը, Այ-Տօդօրը, Այ-Պետրին, Գուրզուֆը... բայց կանգ առնենք Թէոդոսիայի վրայ.—ով չգիտէ Այվազովսկու ծննդավայրը կամ լսած չէ նրա պատկերների գալէրէյի մասին: Շոգենաւը պէտք է երկար կանգնէր ապրանք վերցնելու համար. ես շտապով ցամաք իջայ, նայեցի քաղաքի մի քանի տեղերը, Ջենովացոց ժամանակուանից մնացած քարուքանդ աշտարակները, Խալիպեան դպրոցը, որ այդ ժամանակ զօրանոցի տեղ էր ծառայում, մտաբերեցի անցեալը՝ Քէֆէն (Թէոդոսիա), երբ այդ քաղաքում մինչև 100,000 հայեր էին հաշվում և երբ Ղրիմու թերակղզին կոչում էին պատմագիրների առելով «ծովային Հայաստան» (Armenia maritima): Հոգեկան մեծ բաւականութիւն էի զգում, որ հայոց քաղաքում եմ գտնվում, որ կարող եմ ամեն քայլ հայրենակցի հանդիպել, ձեռքը սեղմել, հայերէն խօսել, այնքան էր երկրիս կարօտը՝ որ հոգեբանները կոչում են Նոստալժի՝ իմ մէջ բորբոքուել: Ապա հանճարեղ հայրենակցիս տունը, գալէրէան, ո՛րքան մեծ բաւարարութիւն էին տալիս իմ կարօտիս. հայրենիքից դուրս, այդպիսի հանգամանքում, որպէս ես էի, ամեն բան դառնում է մօտիկ, ամեն անհատ, ամեն պատահական անցորդ դառնում է սիրելի սրտին մօտ, միայն թէ հայի կամ հայրենիքի անունը կրէր... Էհ, վառ երիտասարդութիւն, գեղեցիկ անուրջներ, խոսակ, սուրբ երազներ...

Բայց շարունակում եմ պատմութիւնս: Ծովի ափին, քիչ հեռու կանգնած է երկյարկանի մի սիրուն, համեստիկ տնակ, որ վիլլայի տպաւորութիւն է անում. պատշգամբը ուղիղ նայում է ծովին, որի սիւնազարդ շրջապատից բաղեղները և բարունակները ստուերի մէջ են առնում պատշգամբը: Այդ բարձր ծովատեսիլ պատշգամբից մեր հանճարեղ հայրենակիցը ո՛րքան գաղտնի խորհուրդներ պոկած կըլինի ծովի կըրծքից... Տան առջև կայ մի գեղեցիկ պարտէզ, ուղիղ ծովի ափին, որ սակայն փողոցը բաժանում է տնակից... Սրահից մտնում եմ. մտնում եմ պատկերների սրահը, որ նկարչի տանն է գտնվում, ներքևի յարկում, տանի մասում: Սրահի լուսաւորութիւնը բարձրագոյն լուսամուտներից է, առաստաղը կամարակապ: Մտած քայլին, դըրան դէմ-հանդէպ քո առջև բացվում է մի ահագին՝ պատի մեծութեան պատկեր, որ Վենետիայի փողոց է ներկայացնում, փառաւոր շինութիւններով. չեմ յիշում ինչ շինութիւն է, թերևս դոժերի պալատի մի մասը լինի. այդ շինութեան առջևը ջրանցք է (ինչպէս Վենետիկի բոլոր փողոցները ջրանցք են ներկայացնում), իսկ այդ ջրանցքում այնպէս է յարմարեցրած, որ ջրի վրայով իսկական մեծութեան մի գոնդոլ շարժվում է աջ և ձախ: Այս պատկերի մէջ նայողը համոզվում է, թէ ինչպէս բնութիւնը գեղեցկացնում է ճարտարապետութիւնը. մարդկային ձեռակերտը և բնութիւնը մրցում են: Անցնենք հետևեալ պատկերներին. ահա մի ահագին պատկեր էլ, որ նայողի ուշք և միտքը գրաւում է, թովչում է. այդ «Փոթորիկն» է. համարեա պատի կէսը բռնել է. դու չես կարող հեռանալ այդ պատկերից. ինչ զօրեղ ոյժ ունի դրա արտայայտութիւնը, գոյների բազմերանգ ներդաշնակութիւնը, ջրերի անթիւ, անսահման երանգները և արտացոլումները, տարածումների և կոհակների բըրանցումը, ծովի ցասումը և խստութիւնը, երկնքի մթութիւնը,—այդ բոլորը վարպետօրուած է մի մռայլ խորհրդակցութեան մէջ, որ կոչում են «Փոթորիկ»: Իսկ այդ փոթորիկի մէջ մարդը, կենդանի մարդը, ինչպէս մի հիւլէ, մի մրջիւն, կպել է ջախջախուած կայմին, յուսալով որ կըփրկուի. այդ է նրա վերջին յոյսը. չեմ կամենում հեռանալ այդ պատկերից. սկզբի տպաւորութիւնը անհասկանալի է, անըմբռնելի, բայց հետզհետէ քեզ կաշկանդում է այդ տպաւորութիւնը և դու հեռանում ես «Մթերի» տրամադրութեամբ, որ փոթորկի հետ կռիւ է մըղում: Որպէսզի ժամանակը չանցնի, քանի որ մթնշաղը մօտ է, շարունակում եմ նայել. Ահա մի գեղագուարճ պատկեր, որ հոգեկան սփոփանք և հաշտութիւն, քաղցր և ներդաշնակ յուզմունք է ներշնչում. փոթորկից ազատուել առայժմս և հասել ես հաշտութեան ափը. այդ անսահման կապոյտ ջրերին, որ հազար ու բիւր արտացոլումներ ունին, այդ ճոխ գոյներն են արևմտեան կիսագնդի, այդ վայրենի և հրաշքների աշխարհն է, որ Կոլոմբոսը գտաւ: Նաւը մօտեցել է կղզուն, վայրենի բնիկը խուսափում է եւրոպացու նաւից, Կոլոմբոսը բարձրացրել է ձեռքերը, խաչ ու խաչվառը ծածանում է. Նա Սան-Սալվատոր է դուրս գալիս... բայց, իմ ընթերցող, դու պէտք է տեսնես այդ պատկերը, որ իմանաս, թէ ո՛րքան խորհըրդաւորութիւն կայ ամենամօտիկ և ամենահեռու սահմանների մէջ, թէ անչունչ առարկան, ինչպէս ջուրն է, ո՛րպիսի բաղդըրաբարոյութեամբ, հանդարտ և խաղաղաւէտ հոգով զգվում է քեզ, ողջունում է քեզ, փաթաթվում է քեզ իր ալիքներով, ցանկանալով համբուրել, որովհետև փոթորկից, անյոյս հանգամանքից, անսահման կապոյտ ովկիանոսից, արդէն հասել ես «ափը». . . բայց մեղք չէ վայրենի բնիկը, որ ստիպուած է յետ փախչել իր սիրած հողից:

Ահա մի գեղեցիկ ծովանկար. այդ Ղրիմու թերակղզին է. «այնտեղ բարձրադիր գրանիտ ափերին ճարտարեղ ձեռքի չքեղ շինուածքներ հպարտ բազմում են. և նաւն անցնում է ներքևը ծովի խաղաղութեան մէջ, և նաւորդն հնչում է սրինգի վրայ մի արկածային երգ...» իմ ընթերցո՛ղ, եթէ Միջերկրական ծովի հրաշալիքները կազմում են յունական, իտալական և իսպանական ափերը, ուրեմն Սև ծովի հրաշալիքը Ղրիմու թերակղզին է.,.: Դրախտահայր՝ ճոխ, բազմերանգ գոյների այդ թռչունը՝ վառ վերջնալուսի ժամանակ նստում է մի քարի կամճիւղի վրայ և զմայլվում է վերջնալուսի տեսքով. ո՛րքան նմանութիւն կայ նրա և վերջնալուսի գոյների մէջ, նրա և բնութեան տրամադրութեան մէջ... Գալիլեայի համախմբուած և խորհրդաւոր, մռայլ ու չոր ու ցամաք բլուրների մէջ ծնաւ Քրիստոսը իր Աստուածային վարդապետութեամբ, Իտալիայի բնութեան քնքշութիւնը և մեղմութիւնը ստեղծեցին Ռաֆայելին, Մուրիլլօյին, Անժէլօյին և Վինչիին իրանց պատկառելի և երկնապատկեր, քնքոյշ և վեհ վրձինով. լեհական անըրջական բնութիւնը և քաղաքական կեանքը առաջացրին Շօպէնի թախծալի նուագը, մեր առջևն է խիստ Սկանդինաւիայի Իբսէնը, հերոսների և սիմվօլների ծնողը: Սակայն Ղրիմը կարող էր ծովանկար ստեղծել. ո՛րքան սփոփիչ, ճաշակը զգւող, նուրբ և մեղկ գոյներ են, ի՛նչ համաչափութիւն և ներդաշնակութիւն կայ այդ թերակղզու ձևերի մէջ: Այւադաղ, Այ-տօդօր, Ալուպկա, Լիւադիա և այլն:

Ահա մի գեղեցիկ պատկեր էլ. «Պուշկինը Սև ծովի ափին,». այս պատկերի մէջ, ինչպէս յայտնի է, Պուշկինին նկարել է Րէպինը, իսկ ծովը և ժայռերը Այվազովսկունն է.—Ոսկէ լուսինը երեկոյեան դէմ շողերը սփռել է ծովի վըրայ, իսկ ժայռերի վրայ, մթութեան մէջ, յենուած խորհում է բանաստեղծը:

ների կազմել հայ գաղթական երեխաների ցուցակը, հաշուելով 5-ից մինչև 15 տարեկանները, որպէսզի համաձայն գոյացած թւի, ոտնամաններ և ճերմակեղէն պատրաստուի։

* *
*

† Ամսոյս 5-ին գիշերը, երկարատև հիւանդութիւնից յետոյ վախճանուեց 65 տարեկան հասակում Թիֆլիզի, Կովկասի հասարակութեան յայտնի տպարանատէր Յովհաննէս Մարտիրոսեանցը։ Հանգուցեալը մեր երկրի տպագրական գործին մեծ ծառայութիւններ է մատուցել, լինելով Թիֆլիզի տպագրական գործի կարապետներից մէկը։ Տոկուն, քրտնաջան աշխատանքով նա նուիրուած էր գրաշարութեան արհեստին և շնորհիւ իր բնական խելքի, ճշտութեան և դէպի արհեստը տածած սիրոյն, կարողացաւ Թիֆլիզում տպարան հիմնել ու հասցնել այդ տպարանը այնպիսի կատարելութեան, որի նմանը քիչ կարելի էր գտնել մեր երկրում։ Հանգուցեալը սիրահար էր իր գործին և նրան ամենայն արժանաւորութեամբ անուանում էին Թիֆլիզի Գուտտենբերգ։ Նա համակիր էր հայ գրականութեան ու մամուլի և նրա տպարանը հայ ժողովրդին տուել է բազմաթիւ ընտիր հրատարակութիւններ։։

* *
*

Մայրաքաղաքի թերթերը հաղորդում են թէ ազգային լուսաւորութեան նախարարութեան մէջ կազմուած յատուկ մասնաժողովը, որին յանձնուած է քննել նոր բացուելիք բարձրագոյն մանկավարժական դպրոցների խնդիրը, չէ գտնում Թիֆլիզում բացուելիք բազմարուեստեան դպրոցով, սպասելով մինչև որ այդ հարցը քննէ Կովկասեան կառավարչապետի խորհուրդը։

* *
*

Նոյեմբերի 4-ին Կովկասեան պ. կառավարչապետի խորհրդի նիստում քննւում էր Կովկասեան գիւղական ճանապարհապահ ոստիկանութեան բարեփոխման խնդիրը։

* *
*

Թիֆլիզ ժամանեց բժշկականութեան դոքտոր պ. Գ. Ֆօն-Րօզէն, որ ուղարկուած է միջոցներ ձեռք առնելու ժանտախտը Ռուսիայի սահմանները մտնելու դէմ.

* *
*

Կովկասեան կառավարչապետ իշխան Գոլիցինը իւր եւ իւր ամուսնու կողմից նուիրեց 4000 ռուբլի յօգուտ Թիֆլիզի ռուսաց բարեգործական ընկերութեան և 100 ռուբլի յօգուտ III գիմնազիան աւարտող աշակերտների։

* *
*

Թիֆլիզի բանտերի հայ քահանան դիմել է Թիֆլիզի նահանգապետին և խնդրել է թոյլ տալ որ ամեն տարի փետրվարի 14 ին տօնուի Մետեխի բերդի [illegible] եկեղեցու տօնը, որ օծուած է յանուն ս. Վարդան Մամիկոնեանի։

* *
*

ՄՈՍԿՈՒԱ, Հոկտ. 21.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Լազարեան ճեմարանի տարեդարձը։

Ներկայ 1897 թ, հոկտեմբերի 24-ին Լազարեան ճեմարանի հիմնարկութեան 82-րդ տարեդարձի օրն էր, որ այս անգամ տօնուեցաւ նոր վերատեսուչ պրոֆ. Միլլերի մասնակցութեամբ։ Տասնուկէս ժամին աշակերտները իրանց հայ վերակացուների ուղեկցութեամբ գնացին եկեղեցի Ս պատարագին ներկայ լինելու. շատ եկան այնտեղ միւս հայ պաշտօնեայք, վերատեսուչն ու տեսուչը Ս պատարագին երգում էր Լ. ճեմարանի աշակերտների երգեցիկ խումբը. պատարագից վերջը կատարուեցաւ ճեմարանիս հիմնադիր Յովհաննէս Լազարեանի հոգեհանգիստը։ Այնուհետև ճեմարան վերադարձանք և նախաճաշից յետոյ ըս կսուեցաւ տօնախմբութիւնը։ Ճիշտ $12^1/_2$ ժամին կէսօրէի՝ ճեմարանիս բոլոր պաշտօնեայք, կողմնակի հիւրեր և ստուար բազմութիւն Մոսկվայի համալսարանի ուսանողների, որոնք ճեմարանիս վաղեմի աշակերտներն էին, թէ հայ և թէ ռուս, մտան մանկավարժական խորհրդի ընդարձակ դահլիճները և բռնեցին իրանց տեղերը։ Պ. վերատեսչի հրամանաւ, շատով աշակերտներին դահլիճ կանչեցին։ (Չմոռանանք այստեղ յիշելու որ մեր աշակերտների համազգեստը Ռուսաց թնդանօթաձիգ սպաների մունդիրի ձևն ունի)։ Երկար չսպասեցինք. մին էլ տեսնես, խորին լռութեան մէջ, լսուեցաւ ճեմարանիս զինուորական մարմնամարզութեան ուսուցիչ սպայ Գար. Միրիմանեանցի ձայնը և աշակերտները զգոյշ զգոյշ քայլերով սկսան կարգով մտնել դահլիճը. այդ միջոցին նուագում էր աշակերտների երաժշտական խումբը սպայ Կուզեկի ղեկավարութեամբ Աշակերտների մտնելն տեւեց մօտ երեք չորս րոպէ. այնուհետև սպայ Միրիմանեանցը բարձրաձայն հրամայեց, «стой» յետոյ—полуоборотъ на право! Աշակերտները միանուագ իբրև վարժ զինուորներ, մի ակնթարթ դարձան դէպի հանդիսականները ճակատ առ ճակատ։ Տիրեց դարձեալ մի խորին լռութիւն, որ ընդհատեց պ. վերատեսչի հետևեալ խօսքերով Господа поздравляю Васъ съ праздникомъ! դրան ի պատասխան 300 ի չափ աշակերտները որոտաձայն գոռացին. здравія желаемъ Ваше превосходительство! Այնուհետև ամբիոն ելաւ ինքն պ. վերատեսուչը. ակամայ մեր մտքից անցաւ այս հարցը, թէ ինչ կարող է ասել ճեմարանի գործերի մասին մի նոր մարդ, որ դիրեկտոր է հաստատուած միայն երեք շաբաթ դրանից առաջ։ Բայց որչա՜փ մեծ եղաւ մեր զարմանքը, երբ պրոֆ. Միլլերը գեղեցիկ առոգանութեամբ արտասանած իւր ընդարձակ ճառում, աւանդեց մեզ Լ. ճեմարանի պատմութիւնը 1861 թուականից մինչև հանգուցեալ վերատեսուչ Գ. Քանանեանցի մահը, որով ապացուցեց, որ Լ. ճեմարանը իրան համար terra incognita չէ և թէ ինքն քաջ տեղեակ է ճեմարանիս հանգամանքներին։ Պ. Միլլերի ատենաբանութեանը մենք կը վերադառնանք մի ուրիշ անգամ, եթէ միայն հանգամանքները մեզ ներեն։ Պ. վերատեսչի ամբիոնի վրայ յաջորդեց տեսուչ Գ. Լէվէնշտայնը, որ հաշիւ տուեց հանդիսականներին ուսումնական վերջին տարւայ հանգամանքների մասին. ուր իմիջի այլոց ասաց թէ՝ ասագ մատենադարանը տեղափոխուած է նոր շէնքի մէջ. վերջինս կառուցուեցաւ հանգ. Մանուկ-պէյի նուիրած գումարով և այդ պատճառաւ մատենագիտական լսարանների դահլիճում կախուած է նուիրողի իւղանկար պատկերը։ Մի քանի վերակացուներին յատկացրած են ճեմարանում բնակարաններ. Թիֆլիզցի Հախվերդեանը Լ. ճեմարանին կտակել է 8000 ռուբլի մի գումար, որի տոկոսից Լ. ճեմարանում պիտի պահուին «Հախվերդեան թոշակաւորներ»։ Ճեմարանիս վարչութիւնը հեռագրով շնորհաւորել է Լ. ճեմարանի պատուաւոր անդամ Յովհաննէս Այվազովսկուն, նորա 60 ամեայ յոբելեանի առթիւ։ Ճեմարանիս ներքին կեանքի միւս երեւոյթների մասին խօսելուց յետոյ պ. տեսուչը մի քանի ջերմ ու համակրական խօսքեր նուիրեց այն երեք ուսուցիչներին, որոնք այս տարի թողին ճեմարանը։ Դոցա մէջ առաջին տեղն գրաւում է, նկատեց պ. Լէվէնշտայնը, ճեմարանիս վետերան Սմբատ Շահազիզեանը, որ յոբելեան 35 ամաց իւր ամբիծ ու անարատ ծառայութեամբ արժանացաւ ոչ միայն մեր—իւր պաշտօնակիցների խորին յարգանաց, այլ և իւր բազմաթիւ մանուկ և պատանի սաների, որոնք ուսման ընթացքը աւարտելով ճեմարանում, սփռուեցան Ռուսիայի զանազան կողմերը եւ և սահմաններից դուրս։ Ինքն Ս. Շահազիզեանը ճեմարանիս վաղեմի սաներից մէկն, իւր ծառայութիւնը նոյն ճեմարանում սկսեց դաստիարակի պաշտօնից, իւր ժամանակին ուսուցիչ դարձաւ ստորին դասարաններում, յետոյ անցաւ վերին դասարաններ. հմուտ մանկավարժ, ազնիւ բնաւորութեան տէր, կարեկից իւր սաների պիտոյքներին, նա խանձախնդիր ճեմարանիս շահերին, իբրև անդամ նաև տնտեսական խորհրդի պ. Շահազիզեանը վայելում է տեղւոյս հայ հասարակութեան կատարեալ սէրն ու յարգանքը։ Բացի դրանից իւր գրաւոր աշխատութիւններով նա յայտնի է հայոց գրականական աշխարհում, ուր վաղուց մեծ հռչակ է վայելում, իբր ազգային երգիչ։ Երկրորդ ուսուցիչն, պ. Ռեպեցկի ճեմարանը թողեց՝ տեսչի պաշտօնը ստանալով Մոսկւայի VII-րդ գիմնազիոնում. երրորդ պ. Կառնեեվը տասն տարի ձրիաբար ծառայեց ճեմարանում, իբրև ռուսաց լեզուի ուսուցիչ։ Ի վերջոյ պ. տեսուչը արտայայտեց իւր խորին շնորհակալութիւնը իւր բոլոր պաշտօնակիցներին, նոցա անխոնջ ծառայութեան համար։ Նորանից յետոյ, ճեմարանի երգեցիկ խումբը պ. Լակիեռի ղեկավարութեամբ երգեցին մի քանի հայերէն և ռուսերէն երգեր, և ի միջի այլոց Զէյթունի մարշ և Рогнѣда օպերայից, որոնք հասարակութեան կողմից ընդունվեցան բուռն ծափահարութիւններով։ Երեկոյեան բոլոր աշակերտներին ուղարկեցին թատրոն և ցիրկ իսկ ճեմարանի գիմնազիական և մասնագիտական դասարանների ուսուցիչները էրմիտաժ հիւրանոցը ճաշի գնացին Մենք մոռացանք յիշելու, որ պ. Դր. Խալաթեան կարդաց լսարանների մասին հաշիւ, իսկ պ. Սոկոլովը կարդաց, թէ աշակերտներից որոնք յառաջադէմ գտնուեցան և պարգև ստացան։

* *
*

Ղարսի երկաթուղու կառուցումը դանդաղ է գնում, որովհետև կապալառուների և բանուորների մէջ առաջացած անընդհատ թիւրիմացութիւնների պատճառով, շատ դժուար է լինում բանուորներ գտնել։ Մի առ ժամանակ ճանապարհի շինութեան վրայ սկսեցին զինուորներ բանեցնել և այժմ այդ աշխատանքներն եւ դադարած են, իսկ նոր գործաւորներ չեն գտնվում։

Այդ առթիւ «Նով. Օբոզր.»-ի Ղարսի թղթակիցը գրում է թէ կապալառուները իրենց ձեռքին պատրաստ գումարներ չէին ունենում բանուորներին գոհացնելու համար, որովհետև ճանապարհի վարչութիւնը անհասկանալի պատճառներով լրիւ չէր վճարում նրանց հասանելի գումարները, կատարուած աշխատանքների փոխարէն. ուստի և կապալառուները ամիսներով շարունակ ոչինչ չէին վճարում բանուորներին։ Ճանապարհի V-րդ բաժնի կառավարիչը բանուորներին շարունակ մխիթարում էր հաւատացնելով թէ կապալառուները դրամական կողմից ապահովուած են և անպատճառ կըվճարեն նրանց վարձը։ Բանուորները հաւատացին և շարունակում էին իրենց աշխատութիւնները, համբերութեամբ սպասելով իրենց վարձին մինչև հոկտեմբերի կէսը։ Բայց բանը ուրիշ կերպ եղաւ. կապալառուները սկսեցին թողնել Ղարսի ճանապարհի վրայից, թողնել վարչութեան կարգադրութեան տակ իրենց գործակալները և իրենց հասանելիք գումարների մի մասը։ Ճանապարհի կառավարիչը մխիթարում էր թշուառ բանուորներին թէ ինքը «մարդասիրաբար» և գթալով նրանց վիճակին, նրանց դրամների մի մասը կտայ կապալառուների թողած գումարներից. իսկ մնացածն ստանալու համար—ասում էր կառավարիչը—պէտք է դիմել հաշտարար դատարանին որ պահանջէ «Ֆինանսական ընկերութիւնից»։

Առանձին ուրախութիւն պատճառեց թշուառներին—աւելացնում է թղթակիցը—Կովկասեան կառավարչապետ իշխան Գոլիցինի կարգադրութիւնը, որով հրամայվում է անմիջապէս բաւարարութիւն տալ բանուորներին, արտակարգ պահեստի գումարներից։ Առանձին յանձնաժողով է նշանակած այդ հրամանն իրագործելու համար։ Բանուորները պիտի ստանան տասն և մէկ հազար ռուբլից աւելի։

* *
*

«Նով. Վր.» պնդում է թէ անհրաժեշտ է Բօրժոմի երկաթուղու գիծը շարունակել մինչեւ Ախալցխա եւ Աբասթուման։ Ախալցխայի բնակիչների թիւն այժմ հաշվւում է մինչև 17000, որոնցից մեծ մասը արհեստաւորներ են և արդիւնաբերողներ։ Ախալցխան ընտիր խճուղիով միացած է Ախալքալաքի հետ, որ գիւղատնտեսական հարուստ արտադրութեան կենդրոն է։ Բացի դրանից, Ախալցխայի գրեթէ բոլոր գաւառը յայտնի է իւր առատ պտուղներով և իւր կլիմայի և հողի շնորհիւ շատ յարմար է պարտիզպանութեան և այգեգործութեան։ Ախալցխայի շրջանում կան և հանքային հարստութիւններ և մարմարիոն։ Լրագիրը պնդում է, որ եթէ երկաթուղու յիշեալ գիծը շինուի՝ ճանապարհորդների և ապրանքների պակասութիւն չի զգացուիլ։

* *
*

Որովհետև անասունների մէջ ժանտախտը հետզհետէ աւելի և աւելի լայն ծաւալ է ստանում Թիֆլիզի նահանգում, ուստի վճռուած է բժշկական և ոստիկանական բոլոր ոյժերը կենդրոնացնել նախ Թիֆլիզի նահանգի հիւսիսային մասում և այնտեղ անասունների ժանտախտն արմատախիլ անելուց յետոյ, անցնել միւս գաւառներին։ Այդ նպատակով Պետերբուրգից արդէն ուղարկուած են անասնաբոյժ բժիշկներ պ. պ. Մակարով, Նակուշէվ, Լեսկով և Մալինին։ Հոկտեմբերի 15-ից մինչև 22 ը Թիֆլիզի նահանգում ժանտախտից կոտորուել են մօտ 500 անասուն։

* *
*

Նոյեմբերի 5-ին սկսուեց Թիֆլիզի ոստիկանական բաժանմունքների դիւանների վերաքննութիւնը, Թիֆլիզի պ. ոստիկանապետի անմիջական հսկողութեամբ։

* *
*

ՄՈՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են. «Հոկտեմբերի 12 ին Դասպարեան անկելանոցի դահլիճում տեղի ունեցաւ հայ ծխականների նիստը՝ եկեղեցական կալուածքների խորհրդարանի համար նոր անդամներ ընտրելու. որովհետև հին անդամներից մի քանիսի ծառայութեան ժամանակը լրացել էր. իսկ մնացեալ անդամները հրաժարական տուին։ Առաջուայ նիստերին սովորաբար ներկայ էին լինում մօտ հարիւր հոգի. բայց այս անգամ ծխականների թիւը հազիւ 37-ի հասաւ։ Մի կէս ժամուայ վիճաբանութիւնից յետոյ՝ երեւեցաւ, որ շատերը դիտմամբ չէին եկել ժողով, կարծելով թէ այս անգամ էլ նիստը, նախընթաց երկու նիստերի նման, անյաջող ելք կունենայ։ Վերջապէս ընտրութիւնները ղեկավարելու համար նախագահ ընտրուեցաւ պ. Ս. Մամիկոնեանը, որ դիմելով հասարակութեան, հարցրեց, թէ ցանկալի՞ է արդեօք ձեռնամուխ լինել ընտրութեանց, քանի որ ներկայ ծխականների թիւը այնքան սահմանափակ է. միևնոյն ժամանակ նա զգուշացրեց ծխականներին, որ եթէ այս անգամ էլ ընտրութիւնները չկայանան, հասարակութիւնը կարող է կորցնել իւր իրաւունքներից մի քանիսը։ Հասարակութիւնը վճռեց ընտրութիւններ կատարել և վերը յիշած անյաջող հանգամանքներից խրատուած, մի օրինակելի համերաշխութեամբ և կարգապահութեամբ ընտրեց խորհրդարանի համար հինգ անդամ և երկու փոխ—անդամ. ընտրուածները սոքա են. պ. պ. Սարգսեան Լևոն, Պոպով Էմ. Վարդապ Զարեանց, Մուրադեան և Սուլթանշահ Ձորչորեան և այլն։ Դոքա բոլորը, բացի Մ. Մուրադեանից, նոր մարդիկ են։ Հին անդամներից՝ պ. պ. Ս. Մամիկոնեան և Կ. Կուսիկեանց հրաժարուեցան անդամութիւնից։ Ցանկանում ենք նոր անդամներին կատարեալ յաջողութիւն և համերաշխ գործունէութիւն յօգուտ հասարակաց շահերի և ի փառս մեր եկեղեցու, որի կարիքները շատ ու շատ են։ Այս վերջիններից ամենէական անհրաժեշտն քահանայ հ. Ց. Տէր-Ղուկասեանը արդէն զառամեալ ծերունի է, կարօտ է հանգստութեան. Նա մինչև անգամ ինքն էլ դիմել էր այստեղի հայ բարեսերներին, խնդրելով տալ նրան տարեկան թոշակ և ազատել ծառայութիւնից։ Քաջայայտ ենք, որ գոնէ այժմ այդ հասունացած հարցը բաւարար լուծումն կստանայ։ Ուրիշ կարիքների վերայ մենք չենք ակնարկում, չկամենալով խրատներ կարդալ նոր անդամներին. վստահ ենք, որ նոքա իրենքն էլ լաւ հասկանում են եկեղեցու միւս պիտոյքները»։

* *
*

Մայրաքաղաքի թերթերը հաղորդում են, թէ մտադրութիւն կայ առաջիկայ յունուարից սկսած արժէթղթերից առնուած 5% հարկը աւելացնել մինչեւ 10%։

* *
*

Ներքումս մեծ յաջողութեամբ բժշկի քննութիւն տուեց Մոսկուայի համալսարանում պ. Մկր. Սունդուկեանցը, յայտնի դրամատուրգ Գաբրիէլ Սունդուկեանցի որդին։

* *
*

«Կասպի» լրագիրը հաղորդում է, որ նոյն «Մտիւր» ընկերութիւնը որ գնել է Թաղիեվի նաւթային հողերը, ձեռք է բերում նաև Բուդաղեան եղբայրների նաւթային գործը $2^1/_2$ միլիոն ռուբլիով։ Բացի այս, յիշեալ ընկերութիւնը բանակցութիւններ է սկսել Առաքելեանի հետ, նորա նաւթային գործը գնելու

Ձըջապատի նկարները շատ են. մի պատկեր էլ ահա ներկայացնում է ոչխարների ահագին հօտ, որ անձնատուր եղած սաստիկ փոթորկին, նետվում են՝ ամբողջ հօտով՝ ծովը։

Այդ պատկերների մէջ մի փոքրիկ, շատ փոքրիկ պատկեր, յենարանի վրայ դրած, ըստ երևոյթին կիսատ է. պատկերի տակ, բաց մնացած կտաւի վրայ նշանակուած է «1888»։ Հարցնում եմ սպասաւորին՝

—«Ի՞նչ է, նկարիչը այստե՞ղ էր եղել այս տարի»։

—Հէնց հիմա էլ այստեղ է, պատասխանում է սպասաւորը։

—«Հիմա ո՞րտեղ կլինի։ հիմա տո՞ւնն է, նորան կարելի՞ է տեսնել։»

—Ինչո՞ւ չէ։

Չնայելով որ ես չէի կամենում պատկերներից պոկուել, բայց ստիպուած էի այդ անել, որովհետև մութը ընկնում էր, ոչինչ չէր նշմարվում, գիշեր ժամանակ լուսաւորութիւն չկար գալէրէյում։ Ես դուրս եկայ, անցայ տան միւս կողմը, մտայ արտաքին դռնից, բարձրացայ սանդուխները, որոնք զարդարուած էին գեղեցիկ բոյսերով և ծաղկամաններով։ Սպասաւորը, որ իմաց էր տուել մեծ նկարչին մի հայ ուսանողի մասին, ինձ ներս հրաւիրեց։

II

Ես իմ փափագիս հասայ. իմ առաջիս էր եօթանասունմէկ ամեայ պատկառելի ծերը, «Քաօսի», «Ջրհեղեղի», «Փոթորկի» ստեղծագործողը, որին ուզում էի գրկախառնել. ինձ թւում էր, թէ նրա հետ վաղուց ծանօթ էի, նրան վաղուց գիտէի, այնքան էր հոգիս կաշկանդել նրա պատկերի սկզբնական տպաւորութիւնը. երկար կարօտը ուզում էի նորանից առնել...

Խօսակցութեան սկիզբը նա հարցրեց մեր երկրի, Կովկասի և իմ ծննդավայրիս՝ Շիրակի մասին, շատ հետաքրքրուեց և. Էջմիածնի դրութեամբ, կաթողիկոսի մասին հարցրեց, և երբ լսեց, որ ես ուսանող ժամանակ պարապելու եմ և գիւղատնտեսական գիտութիւններով, նա հարցրեց երկրագործ ժողովրդի մասին, ցանկանալով իմանալ «թէ հողը բաւակա՞ն է, գիւղացին, հողագործը լա՞ւ դրութեան է, նեղութիւն չի՞ քաշիլ»։ Բայց ամենահետաքրքիր մասը խօսակցութեան վերջն էր. յարգելի նկարիչը իմանալով որ իմ ծննդավայրս մօտ է գտնվում Տաճկա-Հայաստանի սահմանին և մեզանում երթևեկութիւն միշտ լինում է Կարինի, Մուշի, Բիթլիսի և Վանայ հետ, մանաւանդ այն ժամանակ քրդերի հրոսակները իրանց թալանները սկսել էին և հայրենիքի խորքերում տեղ տեղ բռնկվում էին հայրենասիրութեան «կայծերը», յարգելի նկարիչը հարցրեց. «անոնց դրութիւն, անոնց կեցութիւն աղէկ է, աղէկ է, հաց կա՞յ, հաց ունի՞ն, չի՞ն նեղուի...»։ Այսօրուայ պէս ականջիս հնչում է այդ բարի մարդու «աղէկ է, աղէկ է» խօսքերը, որ աւելի բարի ձայնով արտայայտում էր։ Ես չափազանց գոհ մնացի այս տեսակցութիւնից, վեր ելայ, «մնաս բարև» ասացի, յայտնելով իմ ուրախութիւնս. «երբ երթաս, ինձմէն բարև տար ձեր երկրին, անտեղի հայերուն. . »։ Այս րոպէում՝ երբ ես գրում եմ, իմ առաջևս է նորա սպիտակ, երկար մազերով, լայն և ուռուցիկ՝ իւր նկարած ծովերի նման խորհրդաւոր և ալիքների նման ծալքերով՝ ճակատը. ճակատից ներքև մութ և մանր, յոգնած և խոր արտայայտութիւն ունեցող աչքերը. երկու կողմանի մօրուքը՝ սափրած այտ-մօրուքով և ընչացքով. աւելի միջակ քան բարձր հասակի, լայնեղ կրծքով և թիկունքով, որ մի կարճ. վերնազգեստ հագած՝ նըստել էր համեստ կահաւորուած դահլիճի մի անկիւնում գտնուող բազմոցի վերայ։

Այդ քաղցր տպաւորութեան տակ ես ելայ դուրս, արդէն մութը ընկել էր, սիրտս և երևակայութիւնս այնքան յուզուած էին այդ տպաւորութիւնից, մանաւանդ «փոթորկից», որ ես ուզում էի նորից տեսնել։ Բայց չէր լինի։ Նստայ պարտէզի մի նստարանի վրայ, որ ծովին էր նայում և որտեղ նուագախումբը զբօսնողների համար նուագում էր Ձօպէնի թախծալի «գիշերանուագը» (Nocturne). «չեմ գնալ, կլսեմ այստեղ ծովի երգը կլսեմ, Ձօպէնի «գիշերանուագը», մինչև լուսանայ և նորից «Փոթորիկը» տեսնեմ։

Հոգուս այս յուզմունքի ժամանակ ես լսեցի շոգենաւի շւոցը, ես նաւաբեկուածի նման՝ փոթորիկէս և յուզմունքիս այդ ժամին՝ ընկայ այս—այն կողմ մը, յենարան, մի ազատարար նեցուկ որոնելու համար. այդ յենարանս էր «Կօգերու» շոգենաւը, որտեղ նստելով սլացայ ծովի մթութեան մէջ դէպի յառաջ.. այնուհետև՝ կեանքիս մէջ՝ ես շատ անգամ առիթ ունեցայ յարգելի հայրենակցիս՝ Յ. Այվազովսկու լաւագոյն պատկերները տեսնելու,—«Փոթորկից» յետոյ, «Քաօսը» «Ջրհեղեղից» յետոյ և ուրիշ շատերը. նմանապէս Տիցեանի, Րէնի, Ռաֆայէլի, Մուրրիլոյի, Կօրրիդժօյի, Րեմբրանտի, Րուբէնսի, ռուսաց Ռէպինի, այլ և Կունինջի և Շիշկինի նկարները, բայց որանցից ոչ մէկը ինձ մէջ այն փոթորիկը չզարթեցրեց, որպէս հայրենակցիս «Փոթորիկը» իւր առաջին տպաւորութեամբ, հայրենիքից դուրս...։

Այն օրից անցել են ինը կլոր տարիներ։

Berberis L.

1897 թ. հոկտ. 31
Ալեքսանդրոպոլ։

ԴԷՊԻ Ս. ԳԷՈՐԳ

(Փոքրիկ ճանապարհորդութիւն)

Աստուածածնի վերափոխման ուրբաթ օրն էր։ Վարազաբոյն գիւղի ուսուցիչը և նոյն գիւղացի մի պարոն խնդրեցին գնալ իրենց գիւղը։ Յարգելով ծանօթներիս խնդիրը, ես համաձայնուեցի և որոշեցինք հետևեալ օրը ճանապարհուել։ Երեքս էլ ուրախ տրամադրութեան տակն էինք. նախ որ ամառային այդպիսի գեղեցիկ եղանակին պէտք է գնայինք գիւղ և երկրորդ, պէտք է տեսնէինք մեր ծանօթ վայրերը. այդ գիւղում ես ուսուցչութեան պաշտօն էի վարել։ Շաբաթ առաւօտեան Վարազաբոյնցի ընկերս եկաւ յայտնեց, որ իրենց գիւղից երկու ձի եկել է, մնում էր միայն երրորդն վարձել. Ժամը երկուսին երեքս էլ ճանապարհ ընկանք։ Մենք ստիպուած էինք շատ դանդաղ գնալու, որովհետև ձիատէրերը հետիոտն մեզ հետևում էին և ոչ մի քայլ չէին ուզում բաժանուել իրենց կենդանիներից։ Մեզ ընկերացան դարձեալ նոյն գիւղացի մի ուրիշը և քահանան, որոնք ճանապարհին յայտնեցին, որ իրենց գիւղացիներից շատերը գտնվում են ս. Գէորգայ վանքում և մեզ էլ հրաւիրել են. հետևապէս աւելի լաւ կլինէր, որ մենք էլ գնայինք յիշեալ վանքը և յետոյ վերադառնայինք գիւղ։ Բալլուջա գետի կամուրջի մօտից ձիանց գլուխները դարձրինք դէպի արևմուտք։ Արևն արդէն մայր էր մտել և հեռուից հազիւ նկատելի էր այն բարձրութիւնը որի վրայ գտնվում էր վանքը։ Ճանապարհը անցնում էր մերթ ուղիղ տեղերով, մերթ այգիների և ձորերի միջով։

Հիանալի էր ամառային երեկոն։ Ցերեկը փոշուց խեղդուել էինք, որովհետև խճուղիով էինք անցնում, շոգը մի կողմից, շարունակ անցուդարձ անողներից և քամուց բարձրացած փոշին միւս կողմից մեզ բաւական չարչարել էին. այժմ դրա հակառակ՝ փչում էր մեղմ ու զով զեփիւռը, որ միախառնուելով ծառերի տերևների խշխշոցի, առուների ու գետակների քչքչոցի և վշվշոցի, դէպի բներն շտապող թռչունների երեկոյեան ծլվլոցի ու երգերի հետ, նոր կենդանութիւն էր շնչում մեր խոնջացած անդամներին։ Որպիսի՜ հիանալի տեսարաններ, որքա՜ն գրաւիչ պատկերներ... Դեռ արևը նոր էր մայր մտել, երբ երևաց Վեներան, ճանապարհորդների փարոսը, նախնիների վերադարձի նշանը. իսկ լուսին՝ շառագունած՝ իբր արեւնաներկ, իւր ամբողջութեամբ գլուխը հպարտ—հպարտ, հանում էր հսկայ սև լեռների ետևից, ջրերի միջին անդրադառնում, հանդիպակաց բլուրների գագաթները լուսաւորում ու վերստաչափ ստուերներ տարածում մեր շուրջը։ Այդպիսի հրաշալիքների մէջ գտնուելով, ոգևորում ենք և ամենքս միասին երգում.

«Մի գեղեցիկ պարզ գիշեր էր,
Երկինքը լի աստղերով,
Եւ լուսինը մեղմ փայլում էր
Կաթնանման իւր լուսով»։

Եւ մեր երգին արձագանք էին տալիս լեռներն ու ձորերը, ձայնակցում էր գետակը, ոգևորվում են մեր ճանապարհորդները և հրացանները հանելով արձակում են։ Հրացանների ձայնից թնդում են լեռները, թնդում են և մեր սրտերը։

Գիշերուայ ժամը 9-ին անցնելով Ղշլաղ գիւղի մօտով՝ կէս ժամից յետոյ Թև գիւղումն էինք։ Այստեղ մեր ձիատէրերը յայտնեցին, որ ձիով չի կարելի այլևս առաջ գնալ, որովհետև մի երկար զառիվեր է բարձրանում դէպի վանքը և այնտեղ էլ ձիանց համար կերակուր չի լինի։ Մենք ստիպուած էինք նրանց ցանկութիւնը կատարել և ոտով գնալ Վանքը։

Ճանապարհը բարձրանում էր դէպի լեռը. երկու կողմը խիտ անտառ էր՝ ճանապարհի մի կողմով կատաղաբար թափվում էր լեռնային վտակը. չնայելով ջուրը փոքր էր, բայց նրա քչքչոցը մենք հեռուից էինք լսում։ Գիւղացիք ձիատէրերի հետ պատմում էին գիւղական աշխատանքի և աւազակների մասին, մի քանիսը հանաքներ էին անում, յանկարծ խմբովին բարձրացնում էին եր-

նկատմամբ։ «Այդպիսով, էնկատում «Կապին» մեր նաւթային արդիւնաբերութիւնը վերջնականապէս անցնում է օտարների ձեռքը։»

* * *

Ամսոյս 5-ին Թիֆլիզում ստացուեց Ռուսաստանի միայն մի օրուան փոստը։ Մայրաքաղաքի թերթերից ստացուած են միայն լրագրների նոյեմբերի 25-ի համարները։

* * *

Ռուսիայի մի քանի նահանգներում, ուր մտցուած է օղիի կառավարչական մենավաճառը, պատահել են դէպքեր որ հոգեւորականների կանայք օղի վաճառելով են զբաղուել։ Այդ առթիւ «Նով. Վր.» հաղորդում է թէ այժմ յիշեալ նահանգներում կարգադրութիւն է եղել որ քահանաների և տիրացուների կանայք չմասնակցեն օղի վաճառելուն պետական պահեստներում, իբրեւ ծառայողներ կամ գործակատարուհիներ։

* * *

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ ԹԻՖ. ԼԻՑՈՒՄ

Նոյեմբեր 5-ին ազնուականաց բանկի թատրոնում կայացաւ ներկայ սէզոնի առաջին ներկայացումն։ Հայ թատերական ընկերութիւնն այս անգամ ընտրել էր «Ղարաբաղի աստղագէտ» պատմական դրաման, որ արդէն ծանօթ է Թիֆլիզի թատերասէր հասարակութեան և այս անգամ տրուեց անհամեմատ աւելի մեծ չքեղութեամբ։ Երեւում էր, որ առանձին ուշադրութիւն էր դարձուած զգեստների ճշտութեան և չքեղութեան վրայ, այնպէս որ կարելի էր գաղափար կազմել Խամսայի մելիքութեան օրերի, կեանքի և նիստ ու կացի վրայ։ Ուրախալի է տեսնել, որ դերասանների մէջ չէր նկատվում անփութութիւն՝ դերեր սովորելու վերաբերութեամբ։ Շատ չնչին բացառութեամբ, բոլոր մասնակցողները գիտէին իրանց դերերը և այդ հանգամանքը նպաստում էր ներկայացման յաջողութեան։ Սակայն մենք կարծում ենք, որ դրանով չպէտք է բաւականանալ, այլ պէտք է նկատել անխտիր բոլոր հայ դերասաններին և թատերասէրներին, աւելի խընամքով վերաբերուելու հայ լեզուին, ի նկատի ունենալով, որ բեմը գեղարուեստի տաճարներից մէկն է և նրա վրայից լսուած լեզուն պէտք է օրինակելի լինի։ Առանձին առանձին գործող անձինքների մասին երկար չենք խօսի, որովհետև անսամբլը շատ յաջող էր և ամենքը բարեխղճութեամբ կատարեցին իրանց դերերը։ Մեր տաղանդաւոր թատերասէրուհի օրիորդ Խիթարեանը Սալիհայի դերում կրկին անգամ ապացուցեց, թէ որքան բարեխղճութեամբ է վերաբերվում իւր յանձն առած դերերին, ուսումնասիրելով նրան և արտայայտելով հոգեբանական ճշտութեամբ և զգացմունքով լի։ Փանահ-խանի տիպարը թէ խաղով, թէ գրիմով և զգեստով շատ գեղեցիկ արտայայտեց թատերասէր պ. Սուքիասեանը, որի խրոխտ ձայնը և մաքուր հայերէն լեզուն ու արտասանութիւնը առանձին յաջողութիւն էին տալիս նրա խաղին։ Ինչպէս պէտք էր սպասել, երեւելի հերոսն էր մեր տաղանդաւոր կոմիկ Տէր-Դաւթեանը—աստղագէտ Հասանի դերում, որի ամեն մի շարժուածքը, ամեն մի արտասանած խօսքը զուարճութիւն էր պատճառում հասարակութեան։ Տաղանդաւոր կոմիկն իւր դերն ուսումնասիրել է այնքան մանրամասն, այնքան բարեխղճաբար, որ դժուար է երեւակայել աւելի լաւ դերակատար։ Վատ չէր և պ. Աղայեանը, Մելիք Շահնազարի դերում, միայն ցաւալի է, որ երիտասարդ դերասանը ունենալով բաւական մաքուր արտասանութիւն, լաւ ձեւեր, իւր ձայնին արհեստական տօն է տալիս. պ. Աղայեանի խօսակցութիւնը երբեմն երգելու ձեւ է ստանում և վնասում է իւր խաղի բնականութեան։ Նպաստաւոր տպաւորութիւն գործեց իւր խաղով և պ. Մամիկոնեանը Մելիք-Բէգլարի դերում։ Նրա խաղը զգացուած էր, լի եռանդով, արտայայտութեամբ, միայն երիտասարդ դերասանին անհրաժեշտ է շատ լուրջ ուշադրութիւն դարձնել լեզուի վրայ, չը շտապել և բառերն աւելի որոշ արտասանել։ Յաջող էին տիկին Փառանձեմ սարկուհի Զավոյի դերում և պ. Բէկեան Մելիք-Շահնազարի դերում։ Թատրոնում բաւական թուով հասարակութիւն կար և այդ ներկայացումն արդէն գրաւական է, որ ներկայ սէզոնը յաջողութեամբ կանցնի, մանաւանդ որ երեւում է խիստ կարգապահութիւն և ճշտութիւն։

Թատրոնում փօէյներում արդէն կախուած էր հետեւեալ ներկայացման յայտարարութիւնը. ներկայացումը կըկայանայ չորեքշաբթի, նոյեմբերի 12-ին և կըտրուի «Ահա քեզ ապահարզան» կոմեդիան և «Մկնիկ» վօդեվիլը։

* * *

ԲԱԳՈՒԻՑ ՀԱՅ ԹԱՏՐՈՆԸ

Երէկ երեկոյ հայոց թատերական խումբը կըներկայացնէր «Փարիզի Չըքմորիկը» և «Բաղդասար Աղբարը»։ Անմիջապէս պէտք է ասենք թէ կատարեալ յուսախաբութիւն կրեցինք. այս պիեսներն չափազանց անխնամ կերպով բեմ եկան։ Խաղացողների մի անհոգութիւն, մի անտարբերութիւն կերեւի. մանաւանդ դերերի յեղաշրջում, որ ոչ մի բանով չբացատրուիր։ Սկսենք կարգով. «Փարիզի Չըքմորիկը» կամ աւելի ուղիղ կըլինէր կոչել Գավրոշը շատ սիրուն բարոյալի և մտացի մի խաղ է, որուն գլխաւոր դերակատարն էր օր. Հրանոյշ։ Սա առաջին անգամն չէր որ տեսարան կուգար։ Ընդհանուր կերպով թողուցած տպաւորութիւնը լաւ էր. իւր քրօջը նման բառերը չծամծմէր, միայն թէ, բնական է, ձայնը չէր յարմարէր դերին։ Գավրոշի, Բարիզեան բուլվարի այդ ստահակ տղուն չարաճճիութիւնը մի քիչ տղայութեան էր տանում օրիորդը. տեղ տեղ չափազանցում էր իւր դերը, մանաւանդ երկրորդ տեսարանում, երբ ժեներալը ընդունում էր իւր քոյրը իբր հարս. իսկ Օհանեան իւր դերում չէր. որքան որ այդ դերասանը չարունակէ իւր անբնական դէմքի շարժումները, ձայնին և խօսուածքի արուեստական ծամածռութիւնները, նա չպիտի կարողանայ գոհացնել հասարակութիւնը։ Ափսոսալի է այդ, զի բնութիւնը շնորհած է նրան ֆիզիքական ձիրքեր, դուրեկան ձայն, վայելուչ ձև, ինչ որ հարկաւոր է իբր զարդ մի լաւ դերասանի։ Օր. Վարդուհի և Վրոյր գոհացուցիչ կերպով արտայայտեցին իրանց դերերը։ Իսկ Աբէլեան կատարեալ ժեներալ մ'էր. խստապահանջ և ճենգլմէնի լաւագոյն ներկայացուցիչը. միայն թէ բեմին վրայ շատ բարկանում է և բարկութիւնը չափազանցուած զայրոյթով յայտնում։

Քանի օրերից ի վեր անհամբերութեամբ սպասում էինք Պարոնեանի հրաշակերտին և ինչ ակնկալութեամբ, ինչ յոյսերով դիմեցինք թատրոն՝ դիտելու այդ մեզ քաջածանօթ տիպերը։ Շատ յոռի և շատ ցաւալի տպաւորութեան ներքեւ մնացինք։ Կարելի է շատ էինք սպասում և հէնց այդ պատճառաւ, յուսախաբութիւննիս մեծ եղաւ։ Թուրեանը, որի վրայ այնքան հաւատք ունէինք, որին ենթադրում էինք թէ իսկական Բաղդասար աղբարը պիտի ներկայացնէր, ոչնչացուց մեր յոյսը։ Ցաւում ենք ասել, թէ Թուրեան այն անհաւատալի յանցանքն էր գործում, որ չէր իմանում կատարելապէս իր դերը. կը բաւէ մի տեղ կաղայ, մի տեղ շլքայէ, և ահա խաղը կընկնի։ Իւր վրայ կեդրոնացած է ամբողջը. ինք պէտք էր ուժ տար և իւր կատարելութեամբը միւսներին թերութիւնը աննշմարելի անէր։ Իւր միմիքական ձեւերը իրօք նկարում էին այն տրփասէր, ագահ, և պատւոյն նախանձախնդիր պօլսական հին դէմքերից մին. բայց բառերը պէտք են օգնել այդ միմիքային և նրանց լրացուցիչ մասը կազմեն։

Որքա՜ն թոյլ էր սա ամենակարեւոր խօսքերը. «կինս անհաւատարիմ է և բնականաբար, հետևաբար. . .» Ինչ ազդեցութիւն էին գործում այս խօսքերը Վրոյրի երբեմն ներկայացումին։ Եւ ինչո՞ւ խաղը փոփոխել։ Փաստաբանը պէտք էր սովորեցնէր այդ խօսքերը, մինչդեռ Թուրեան ինքն է արտասանում դրանք։ Յետոյ վերջին տեսարանում Թուրեան պէտք չէր նստած բեմին վրայ, այլ խփելով դատաստանական խորհրդի ատենապետին, պէտք էր հեռանալ բեմից։ Նմանապէս ուսկից էր բէվոլվէրէ տեսարանը։ Խաղում այդպէս բան չկայ։ Վրոյրը կատարում էր փաստաբանի դերը։ Սա չըգիտեմ ինչո՞ւ, չափազանց նեղանում էր, մինչ նեղանում, անդադար շարժվում, ծայրից ծայր երթալու խառնում էր խօսքերը և իբր բնական վճռականութիւնը չէր։ Ինչ որ ապա ան հասկանալի և անհեթեթ է, Անոյշի դերը տիկ. Աւետեանի յանձնելն է. մինչդեռ երկու Պօլսեցի օրիորդներ—Վարդիթեր և Հրանոյշ շատ հեշտիւ պիտի կարենային կատարել այդ աննշան դերը. մինչ դեռ տիկ. Աւետեան, լեզուի անվարժութեամբ մի կատարեալ քաոս դարձրեց այդ խաղը։ Իսկ դատաստանական խորհրդի անդամները, Մելիք Յովսէփեան, Ալիխանեան և Աւետեան ամենածիծաղի կերպով հրապարակ եկան։ Ահա եզրակացութիւնը այս նշանաւոր ներկայացման։ Շատ վատ և ցուրտ արդիւնք յառաջ եկաւ։

Հետաքրքիր ենք իմանալ թէ ինչու մի այնքան ամփոփ խումբ, ինչպէս է արդի դերասանական խումբը, այնքան անշընորհք անսամբլով բեմ են գալիս, ինչու դերերը ըստ կարողութեան չեն բաժնվում։ Առանց ռէժիսէր լինելու յաւակնութեան, ահա ինչ կերպով կարելի էր ակնկալել կատարեալ յաջողութիւն, Բաղդասար աղբօրի ներկայացումի։

Բաղդասար աղբար	պ. Վրոյր
Անոյշ	օր. Հրանոյշ
Ռուբէն	պ. Օհանեան
Օգսեն, փաստաբան	պ. Սուքիասեան
Ատեն. դատաւ. խոր.	պ. Թուրեան
Անդամք » »	Աբէլեան
» » »	Աւետեան
Ձուշան	օր. Վարդուհի

Անցեալ տարուայ ներկայացումը ամենքս յիշում ենք և այդ տպաւորութեան ներքեւն է որ արդի ներկայացումը նախորդին պարտքեան եղաւ։

Մ. Ն.

1 նոյեմբ. 1897 թ.
Բագու։

* * *

ԱՐԴՈՒԻՆԻ ԿԱԹՈԼԻԿ ՀԱՅԵՐԸ

Արդուին քաղաքը, տաճկաց տիրապետութեան ժամանակ, ամբողջ ընդարձակ գաւառի կեդրոնն էր. բայց վերջին պատերազմից յետոյ, երբ Արդուինը անցաւ ռուսաց ձեռքը, հարաւ-արեւելեան կողմից մի մասը մնալով տաճկաց ձեռքը, գաւառը նախկին ընդարձակութիւնը մասամբ կորցրեց։ Արդուինը իւր շրջակայ գիւղօրայքովը միասին, տաճկաց տիրապետութեան ժամանակ, հայ կաթոլիկների համար կազմում էր մի թեմ։ Թեմակալ եպիսկոպոս—առաջնորդը իր աթոռը հաստատած ունէր Արդուինում, նորա իշխանութեան ներքոյ էին Բաթումի, Արդահանի, Կարսի, Օլթիի և Խտրէջուրի շրջանների հայ-կաթոլիկները։ Վերջին օրինաւոր թեմակալ առաջնորդ Հալլաջեան եպիսկոպոսը նախքան պատերազմը, իբր խիստ ծերութեան պատճառով հեռանալով պաշտօնից՝ գտնվում էր Կ. Պոլսում. ուստի ռուսների Արդուինին տիրապետելու ժամանակ, եպիսկոպոսական աթոռը թափուր էր մնացած։ Սակայն Արդուինի ռուսաց ձեռքը անցնելուց գրեթէ մէկ ու կէս տարի յետոյ, Կարնոյ հայ-կաթոլիկաց առաջնորդ Ստեփաննոս եպիսկոպոսը անակնկալ գալով Արդուին՝ տեղացի Զաքարեան Յովհաննէս վարդապետին եպիսկոպոս ձեռնադրեց և այսպիսով ահա Արդուինի թափուր մնացած թեմը իբր թէ իր թեմակալ եպիսկոպոս-առաջնորդը ունեցաւ։ Զաքարեան գերապայծառը իր եպիսկոպոսական պաշտօնը հազիւ 4—5 տարի էր վարել, երբ ռուսաց կառավարութիւնը թէ եկեղեցական և թէ քաղաքական օրինաց տեսակէտից անվաւեր նկատելով նորա եպիսկոպոսական առաջնորդութիւնն առաջարկեց դադարեցնել ոչ օրինաւահման կարգով ձեռք բերած եպիսկոպոսական պաշտօնավարութիւնը և թողնել Արդուինը, և բնակուել Օդեսա կամ Թէոդոսիա քաղաքում. սակայն վերահաս մահը ազատեց եպիսկոպոսին հեռանալ իր ծննդավայրից՝ Արդուինից։

Արդուինում և իւր շրջակայքում հայ-կաթոլիկաց թիւը համեմատաբար շատ աւելի է Լուսաւորչական հայերից. օրինակ Արդուին քաղաքի մէջ հայ-կաթոլիկաց թիւն է մօտաւորապէս մի 1000 տուն, որոնք ունին 4 եկեղեցի և 8 կուսակրօն վարդապետ հովիւներ, իսկ լուս. հայոց թիւն հազիւ հասնում է 200-ի որոնք ունին մի եկեղեցի և մի քահանայ։ Արտանուշ, որի բնակիչը ամբողջովին հայ-կաթոլիկներ են, և Շաւշէտ գաւառակներում համեմատաբար դարձեալ հայ-կաթոլիկների թիւն է մեծագոյնը Լուս. Հայերից։ Բայց հետաքրքրականը նոցա թուի առաւելութիւնը չէ, այլ նոցա ունեցած վաղեմի վայրագ ատելութիւնն է դէպի Լուսաւորչական Հայերը։

Մենք հանդիսատես եղած ենք հայ-լուսաւորչականաց և հայ-կաթոլիկաց, այսինքն այդ երկու համացեղ, համաբուն համայնքների մէջ ի սկզբանէ անտի գոյացուած ու արդէն արմատացած ատելութիւններից ծնունդ առած մեծամեծ չարիքներին ու բազմաթիւ ցաւալի տեսարաններին։ Մրցումը երկու համայնքների մէջ անդադար շարունակուել է։

Տաճկաց տիրապետութեան ժամանակ մրցումը տեղի էր ունենում աւելի բացարձակ կերպով, որով տաճկաց դատարանի անդամները բաւականին օգտւում էին. բայց և այնպէս յաղթանակը միշտ լուս. հայերն էին տանում ի շնորհըս Կարնոյ և Տրապիզոնի հայոց առաջնորդների զօրեղ պաշտպանութեան։ Սակայն ցաւալի է, որ այսօր եւ, 19-րդ դարի վերջում, նախկին ատելութիւնը դարձեալ շարունակվում է։

Փաստեր առաջ բերենք, որպէսզի մեր ազգը տեսնէ, թէ Արդուինի շրջանի հայ կաթոլիկների հոգեւորականութիւնը ո՞ր աստիճան հակառակ է դէպի մեր եկեղեցին։

Շատ անգամ պատահել է, որ հայ-կաթոլիկը ա՛ռ ի ընկերական սիրոյ, խաչ եղբայր է դարձել Լուսաւորչական հայի՝ վերջինիս պսակուելու ժամանակ. սակայն կաթոլիկ կղերը իւր կողմից սահմանած ու նշանակած ապաշխարանքը, եկեղեցւոյ գաւթում, մինչև կատարել տալը, եկեղ. դռնից ներս չէ թողած ու պատարագի երեսը տեսնելու մասնակցութիւնից զրկած է կաթոլիկ խաչեղբայրին, պատճառաբանելով, թէ որովհետև հերետիկոսաց (հայոց եկեղեցին) մտնելով նրանց խաչն է բռնել ու պսակի խորհրդին ներկայ է գտնուել, ուստի արժանի չէ նա ուղղափառ եկեղեցին մտնելու, մինչև ապաշխարելը։ Տեսնուած է նոյնպէս, որ Լուս. հայը կաթոլիկին խաչեղբայրը լինելիս, կաթոլիկ կղերը մերժած է տալ իւր եկեղեցու խաչը հերետիկոս հայի ձեռքը, վասնզի «պղծեալ» ձեռքում «պղծվում» է կաթոլիկի օրհնեալ սուրբ խաչը...

1887 ին Արդուինի գաւառի հայոց եկեղեցիների կառավարութիւնը միանալով Տփխիսու թեմի հետ՝ թեմակալ առաջնորդ Աբիսողոմ եպիսկոպոսը Ախալցխայի ու Արդահանի վրայով իւր նոր վիճակը այցելելու ժամանակ՝ Ախալցխայից Ծղալթիլէ կաթոլիկ գիւղն էր գնում. տեղւոյն կաթոլիկ հոգեւորականութիւնը, գիւղացիք դիմաւորեցին սրբազանին և մաղթեցին բարի գալուստ. սրբազանը իրան դիմաւորող կաթոլիկ հոգեւորականութեան ուղեկցութեամբ ու առաջնորդութեամբ, եկեղեցւոյ զանգակների ձայնով եկեղ. գաւթում խմբուած ժողովրդի հետ մտաւ եկեղեցի, ըստ պատշաճի շարականով եայլն եկեղ. հանդէսով, որ իսկապէս նման էր հայկականին, ուր սրբազանը մի բանախօսութեամբ իւր շնորհակալութիւնը յայտնեց զինքն պատուող կաթոլիկ հոգեւորականութեան ու ժողովրդին։ Սրբազանը Ծղալթիլէի հայ կաթոլիկաց այդ վարմունքը տեսնելով ու ջերմ սիրով ընդունելութիւնը վայելած լինելով, երբ Արդուինի գաւառի Տանձոտ հայ գիւղից, Արդուին գալու համար, Արդանուշ էր գալիս, ուր պիտի գիշերէր, տեղւոյն հայ կաթոլիկ մի քանի պատուաւոր վաճառական մարդիկ ըստ թելադրութեան տեղւոյն հայ գաւառապետի՝ ի պատիւ սրբազանին մի երկու ժամու ճանապարհ ընդ առաջ գնացին։ Սրբազանը իւր կողմից ցանկութիւն յայտնեց հետեւեալը օրը, որ կիւրակէ էր, առաւօտեան եկեղեցի երթալ, ուր իւր շնորհակալութիւնը յայտնէ ժողովրդին զինքն պատուելու համար. բայց սրբազանի այդ ցանկութիւնը միայն ցանկութիւն էլ մնաց, որովհետև տեղւոյն կաթ. հոգեւորականութիւնը բացարձակապէս մերժեց հայ եպիսկոպոսի մուտքը կաթոլիկ եկեղեցին, այսպիսի պատասխան հաղորդելով սրբազանին, թէ «մենք մեր հոգւոր տէրից (*) հրաման չունինք թոյլ տալու հայ եպիսկոպոսի մտնելը մեր ուղղափառ եկեղեցին»..։

Arménien.

(Վերջը հետեւեալ համարում)

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

*** Ահա թէ ինչ է պատմում Վառնայից անցեալ ամիս Կ. Պոլիս վերադարձած մի գաղթական իւր անպաճոյճ լեզուով. Բուլղարական այդ քաղաքը ապաւինած մեր տաճկաստանցի եղբայրների վերին աստիճանի ողբալի դրութեան մասին։

«Այս ձմեռ չկայ Օր. Փրաղըր. ու ցուրտ քամիները, Պալքաններու կիրճերէն անցնելով կ'մոլեգնին քաղաքիս վրայ ուր կ'դողդղայ հէք անտէրունչ գաղթականը։ Ի՞նչ պիտի պատահի այս խստաշունչ եղանակին, մտածումն իսկ սարսափ կ'ազդէ։ Անցեալ տարուընէ ի վեր չկարծուի թէ Պուլկարիոյ գաղթականու-

---

գի ձայնը, հրացան էին արձակում, գոռում գոչում բարձրացնում, անտառը թնդացնում։ Կէս գիշերին մօտ էր, երբ վանքին մօտեցել էինք։ Նշան տալու համար մի քանի անգամ հրացան արձակեցինք, որոնց վանքի կողմից բազմաթիւ որոտումներով էին պատասխանում։ Մեր երգերին պատասխանում էին պարսկական խաղերով, որոնց վայրենի ելեէջները տարածվում էին շատ հեռու։

Վանքի մօտ մեզ ընդառաջ էր դուրս եկել մի գիւղացի, որին մեր ընկերները «մուղդուսի» էին կոչում, սակայն բանից դուրս եկաւ որ դա Երուսաղէմ ուխտ գնացած մահտեսիներից չէր, այլ չինծու, և վանքի եկամուտներից օգտուող։

Վանքի շուրջը պառկած, նստած ու կանգնած էին ուխտաւորներ. իսկ երիտասարդները հրացանները բռնած հըսկում էին։ Իւրաքանչիւր գիւղի ուխտաւորները առանձին տեղ էին բռնել. մեր ձայնին իսկոյն մօտ էին եկել մեր ծանօթները, որոնք մեզ հրաւիրեցին իրենց մօտ։ Սաստիկ յոգնած լինելու պատճառով ամեն մէկը մի տեղ պառկեց. սակայն նրանք իսկոյն թէյ պատրաստեցին և մեզ հրաւիրեցին։ Ոչ մի տեղ ճրագ չկայ. ուխտաւորները իրենց հետ չէին բերել, իսկ վանքը անմարդաբնակ էր, որտեղից կարելի էր գտնել։ Բայց մի քանի տեղ խարոյկներ կային վառած, որոնք և տաքացնում և լուսաւորում էին մեզ։ Մոռացայ ասել, որ սաստիկ ցուրտ էր. այնպէս որ եափունջիս մէջ փաթթուած, դարձեալ դողում էինք։ Գիշերը շատ քչերը պառկեցին քնելու. մեծագոյնները թէ զզուշութեան համար և թէ ցրտից ստիպուած՝ արթուն անցկացրին. Նրանք զանազան հանաքներ էին անում, փող էին ածում. մի քանիսը ծաղրածութիւններ անում ու պարում։

Լուսաբացին էր, երբ վանքի կոչնակը հնչեց և մեզ ժամերգութեան հրաւիրեց։ Ժամերգութիւնը կատարում էր Վարազաբոյն գիւղի և Ղշլաղ գիւղի քահանան, որը ուխտաւորներ լինելու պատճառով եկել էր։

Վանքը իւր անխնամ վիճակով տխուր տպաւորութիւն է թողնում այցելուի վրայ, շինութիւնը փոքր է, անշուք, պատերի ծեփերը քանդուած, մերկ ու սեւացած, պատուհաններից զուրկ, փոշին բաւական հաստութեամբ նստած ամեն մի առարկայի վրայ. սեղանի վարագոյրը սարսափելի կեղտոտ և հնացած. յատակը հասարակ հող. վանքը իւր տեսքով, կարծես, ողբում է անմխիթար դրութեան վրայ։ Վանքի մէջ տեղը կայ երկու սիւն. աջակողմեան սեան վրայ քանդակուած է հետեւեալ արձանագրութիւնը. «ՌՃՁ Թւին կամաւն Աստուծոյ ես Ղուկաս վարդապետս շինեցի մէկ ջաղաց Խաչանակէտ (Խաչէնու գետ) և գլի (տուր) վախոն (վանուց) Սբ. ուխտի Ս. Գէորգայ ի փրկութիւն հոգւոյ իմոյ. ով որ հանել ջանայ ԳԺԸ (318) հայրապետաց և ԲԺան (Երկոտասան) առաքելոց նզովքն առցէ»։

Վանքը գտնվում է Խաչէն գետի աջ ափում բարձրացող մի բլուրի վրայ. ինչպէս երեւում է այս գրութիւնից։ Ղուկաս վարդապետը մի ջրաղաց է շինել այդ գետի վրայ և նուիրել վանքին. բայց հարց ու փորձ անելով իմացայ, որ այդ ջրաղացը և վանքի շրջակայքում գտնուող հարուստ անտառները պատկանում են Թուրք բէգերի։ Մի՞թէ պարզ չէ, որ անհոգութեան պատճառով է այդ բոլորը կատարուել. եթէ վանքը անտէր չմնար, նրա կալուածները չէին անցնիլ մահմեդականների ձեռքը. դրանից լաւ ապացոյց չի լինիլ, որ վանքը ջրաղաց է ունեցել։

Աջակողմեան խորանի առաստաղում մեծ տառերով գրուած է. «Յովսէփ վարդապետ ՌՃԽԷ»։ Ուրեմն, եթէ ընդունենք, որ վանքի հիմնարկողը Յովսէփ վարդապետն է, նրա հիմնարկութիւնը ընկնում է Հայոց 1147 թուին։ Այդ նոյն խորանում գտնվում է Ս. Գէորգի գերեզմանը, որի սապանաքարի արձանագրութիւնը անվերծանելի է։ Վանքում կարողացայ գտնել միայն մի ձեռագիր աւետարան, որի վրայ մի մատի հաստութեամբ փոշի կար. որովհետև սկիզբը և վերջը չկար, ուստի չկարողացայ թուականը որոշել, բայց հաւանական է, որ այնքան հին չէ, որովհետև գրերի ձեւը ցոյց է տալիս։ Եւ ո՜վ գիտէ քանի այդպիսի ձեռագրեր են փչացել և դեռ փչանում են, հոգ տանող չունենալու պատճառով։ Մեր կարծիքով Ս. Էջմիածինը լաւ կանէր, եթէ մէկին նշանակէր այդ ձեռագրերը ժողովելու և չթողնէր փչանալու։

Վանքի մուտքի մօտ մի քար կայ, որ ըստ աւանդութեան մի արջի սապանաքար է. բարեխօս գազանը, ուխտաւորների ասելով, օգնել է վանքի շինութեանը՝ զանազան մեծութեան քարեր բերելով, որից և մեռել ու թաղուել է վանքի բակում։ Լաւ բարոյակըրթական օրինակ չէ՞ միթէ. անբան գազանը շինութիւն է կանգնեցրել, սակայն չկայ մի բանական արարած, որ շինածը կանգուն պահէ։ Վանքի արեւելեան պարսպի տակ գտնվում է մի ծակ քար, որի միջով անցնում են չբերք (ամուլ) կանայք։ Հարաւային կողմը գտնվում են գերեզմաններ, որոնց թւումն է և յիշեալ բարեգործ Ղուկաս վարդապետինը. այդտեղ է և թփերի տակ մի լիճ, որի ջուրը չի ցամաքում։ Լճի մէջ լուանում են մատաղների փորոտիքը, որից ջուրը սարսափելի կեղտոտ է։

Վանքը գտնվում է մի բլուրի վրայ, որ բաւականին բարձր է, և որի երեք կողմից ընկած են խոր անտառապատ ձորեր, իսկ հարաւային կողմը միանում է միւս լեռների հետ, դարձեալ հարուստ ու բարձրաբերձ անտառներով ծածկուած։ Արեւմտեան ձորի միւս կողմը գտնվում է փոքրիկ Ուլբար գիւղը, որի բնակիչները իրանց կենցաղավարութեամբ ու մտաւոր զարգացողութեամբ չեն զանազանվում իրանց անտառում բնակուող արջերից։ Արեւածագին վանքի բակից պարզ որոշվում էր Կուր գետը. իսկ Մռաւի ձիւնապատ գագաթները, Գանձասարի վանքը, Ս. Յակոբայ վանքը անմատչելի կաչաղակաբերդի (Սաղսաղան գալա) հսկայ ժայռը, Խաչէն գետի ամբողջ ձորը մեր աչքի առաջն էին։ Առհասարակ վանքի դիրքը և շրջակայքը գեղարուեստական և միանգամայն վայրենի է։ Սակայն այդ դրախտանման տեղերում բնակվում են խաւարում խարխափող գիւղացիներ։ Եթէ այդտեղ հաստատուէր մի միաբանութիւն, շրջակայ գիւղօրէից մէջ ուսում ու կրթութիւն տարածէր, վանքը շէնցնէր, որքան բարութիւն գործած կըլինէր։ Այս պարտքը ծանրանում է Էջմիածնի վարչութեան և պարտաճանաչ ու անձնազոհ վարդապետների վրայ։ Միայն վեղար ծածկել ու Էջմիածնում հանգիստ ապրելը անձնազոհութիւն չէ. գործ է հարկաւոր, որից դժբախտաբար խորշում են մեր երիտասարդ վարդապետները։ Մոռացայ ասել, որ վանքի հարաւային կողմը կան մի քանի սենեակներ, որոնց կտուրները բոլորովին փլած են։

Դեռ ժամի 10-ը չկար, երբ ճանապարհուեցինք դէպի Վարազաբոյն։ Անցանք նոյն գիւղերով և Ասկեարանի բերդի մօտ ճանապարհներս դարձրինք ուղիղ դէպի արեւելք։ Երեկոյեան մօտ հասանք Վարազաբոյն և բաւական ճանապարհ անցնելուց յոգնած՝ նոյն գիւղի քահանայի տան պատշգամբում նստած հանգստանում էինք,

Արեւը մայր էր մտել, նախիրը վերադառնում էր արօտից. Գիւղի մէջ իրարանցում էր տիրում. տաւարի ու հօրթերի բառաչը, կանանց խօսակցութեան ձայները իրար էին խառնուել։ Գիւղացիք վերադառնում էին խաղողի այգիներից, որոնք գտնվում են չորս վերստ հեռաւորութեան վրայ՝ Աղդամ կայարանի մօտերը։ Քիչ հանգստանալուց յետոյ գնացինք եկեղեցու բակը. որտեղ է և ուսումնարանը. մեր առաջ ընկած էր ամբողջ գիւղը։ Կանայք զամբիւղներով խաղող ու դեղձ էին բերում. տեսնելով մեզ մօտենում էին բարեւում ու պատուղներ համեցէք անում։

—Բարով, վարժապետ, էդ ո՞ր խաչիցն է մեզ մտներդ էք գցել. մինչև հիմա մէկը չկար, հիմայ երկուսդ էք եկել։

Որքան պարզութիւն, բայց և որքան անկեղծութիւն կար դրանց խօսքերի մէջ։ Գիւղացիք էլ նոյն բառերով մօտենում էին և ծիծաղելով բարեւում։

Լսեցինք երգի ձայն. այդ գիւղացի երեխաներն էին, որոնք երգելով վերադառնում էին հանդից։ Նրանք երգում էին.

«Երնէկ թէ այս նոր տարին.
Վերջ տար հայի ցաւերուն,
Չարը կորչէր ու բարին.
Բուն դնէր մեր սրտերում»։

Անցած գնացած փայլուն օրերը երեւան եկան մեր յիշողութեան մէջ. Նորից զգացի գիւղական կեանքի քաղցրութիւնները. յիշեցի ուսուցչութեանս տարին, պատահած դէպքերը, որքան ցանկացայ, որ նորից կրկնուէր այդ տարին. բայց բոլորը անցած էր, միայն դառն իրողութիւնն էր աչքներիս առաջ։

Հետեւեալ օրը այցելեցինք մօտակայ Փիրաջամալ գիւղը. Նոյն գիւղական պարզ, բայց համակրելի խօսքերը, նոյն համեստ հիւրասիրութիւնը։ Միայն երեքշաբթի կարողացանք վերադառնալ քաղաք, մեզ հետ բերելով տխուր յիշողութիւններ։

Սուրէն։

1897 թ. հոկտ. 26
Շուշի։

թեան վիճակը մազի չափ բարւոքուած է. ընդհակառակն։ Ան ատենէն չհաւնած գաղթականդ քսակին մէջ չորս—հինգ ոսկի ունէր, որուն ամենափոքր կոտորակն իսկ գոյութիւն չունի հիմա։ Հապա արծուօրէն հասած օտար մարդասիրութիւնը։ Այսու հանդերձ, անցեալ ձմեռ դարձեալ պակաս չեղան թշուառութեան սրտաճմլիկ տեսարաններ։ Սառն խորշակ մը կ'տատանի, որ պիտի զգետնէ գաղթականներէն շատեր, եթէ անակնկալ նպաստ մը վրայ չհասնի նախախնամութեան մէկ հրաշքով։ Հիւանդանոցի այն ընդարձակ ու ցուրտ շէնքն, ուր անցեալ տարի հիմնուեցաւ նպաստի կայքը, լեփ լեցուն է դեռ խեղճ, անօթի, վտիտ բազմութեամբ մը անտէր գաղթականներու։ Ո՞վ պիտի խնամէ զանոնք. հովը կ'սուրայ չորս դիէն, անհամար ծակուծուկերէն ներս խուժելով։ Վառարան չկայ. փայտ չկայ, ցուրտէն պիտի սառին հոն, այդ տխուր ամայութեան ու լքման մէջ։ Հիմակուց իսկ զանազան հիւանդութիւններով խշտիկներու վրայ պառկած կ'հեծեն հոն անթիւ...ք գաղթականներ, որոց երեսը նայող չկայ։ Չիք տարակոյս որ այդպէս անխնամ թողնելով, լափ մնջիկ պիտի մեռնին, հեռու իրենց ծննդավայրէն, տեսած մեծցած միջավայրէն, կամաւոր տարագրութեան դրոշմին երկնքին տակ։ Տեղացի հայութիւնն, հարկ է խոստովանիլ, գրեթէ բան մը չի կրնար ընել իր համազգի եղբօր այս տխրական վիճակին բարւոքման. անիկայ հազիւ կրնայ իր գլխուն ճարը տեսնել՝ կռուելու համար այն ահաւոր ձմեռին դէմ որ այս տարի կ'պատրաստուի պայթիլ։ Կեցած Աղքատախնամն ալ հազիւ կ'բաւէ սեղմ շրջանակի մէջ բարեգործութիւն մ'ընելու. ան ալ երբեմն կ'ստիպուի դադրեցնել իր դեղի ու բժշկի նպաստները, դրամի անակնկալ չգոյութեան պատճառով։ Ի՞նչ լաւ կ'ըլլան՝ եթէ մայրաքաղաքիդ Ազգային Կեդր. Վարչութիւնը փութաջանօրէն նկատի առնէր այս ողբալի թշուառութիւն, որ կ'ըսպառնայ փչացնել հայութեան բարդ մաս մը։ Աճապարել հարկ է. ասիկա ան խնդիրներէն չէ որ յապաղման տոկայ։ Բան մը վերջապէս, և շո՛ւտով»։

«Բիւզանդիոնը» հրատարակելով այս տողերը, իր կողմից ասում է «այս խղճալի նկարագրութիւնն ընթերցողներուն ուշադրութեան կյանձնարարենք մասնաւորապէս»։ Մենք ևս հայ հասարակութեան ուշադրութեան ենք յանձնարարում նաև Վանայի հայ գաղթականների տխուր վիճակը. բայց Աստուած իմ, որքան քիչ են ազդում այս բոլոր յանձնարարականները, ո՛ պիտի անտարբերութեամբ են ընդունվում...

ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

Կ. Պոլսոյ լրագիրների վերջին համարներից քաղում ենք հետևեալ տեղեկութիւնները.

«ՎԱՆԱՅ մէջ երկու մանկանոցներ կան հաստատուած, մին Վարագայ մէջ որ վանքի հասոյթներով և ժողովրդեան (վանեցոց) նպաստներով կ'ռոգացուի (պէտք է ասել որ հոս, միայն Վարագայ համար հանգանակուած դրամը 100 ոսկիի հասած է, որոյ մէջ է նաև հիւպատոսի նուիրած 15 ոսկին և Մր. Ալէնի տուած 3 զոյգ եզնը)։ Վարագայ Մանկանոցը 30 աշակերտ ունի երկու ուսուցիչով։ Երկրորդ մանկանոցն է միսիոնարաց երկսեռ մանկանոց, որ կարծեմ մեծագոյնն է Անատոլուի մէջ։ Հարիւր վաթսուն տղայ և ութսուն աղջիկ կ'ապրին այժմ միսիոնարական շրջանակին մէջ։ Աղջիկները խառնուած են տեղոյն Ամերիկական աղջկանց ուսումնարանի հետ, իսկ տղայոց մանկանոցը բոլորովին անջատ է, երեք ուսուցիչով։ Տղաք կէս օր ուսման կ'պարապին իրանց յատուկ Մանկանոցի մէջ և կէս օր ալ արհեստանոցներուն մէջ, արհեստ կ'ուսնին.— ոմանք դերձակութիւն, ոմանք կօշկակարութիւն, ոմանք հիւսնութիւն և ոմանք ալ տարազագործութիւն։ Այս չորս արհեստանոցներու մէջ կ'պատրաստուին բոլոր անոնք տղոց կօշիկներն և հագուստները։ Այս անոր տղոց մէջ բաւական յաջող արհեստաւորներ կան։ Այն տղոց համար շինուած է մեծ շէնք մը, որոյ վարի յարկի վրայ կայ ընդարձակ ճաշարան մը, մառան մը, փուռ, բաղնիք և ամբար։ Բաղնիքը շատ գեղեցիկ է։ Փուռի տանիքի վրայ հաստատուած է մեծ պղինձ մը, ուր շարունակ պիտի պահուի տաք ջուր։ Վերնայարկը միակտուր մեծ սենեակ մ'է ուր պիտի ըլլայ տղոց ննջարանն։

«Ձեռնարկութիւն եղած են նաև նոր Մանկանոց մը հաստատելու Կարմրուորոյ մէջ միսիոնարի և ազգայնոց համաձայնութեամբ։ Կազմուած է. յանձնաժողով մը հայ և հայ բողոքական անդամներէ. գծուած է պայմանագիրը։ Տրդ. Րէյնօլտս յանձն կառնու հոգալ Մանկանոցի ծախքեր, և վարչութիւնը լուսաւորչականաց յանձնել, միայն մէկ պայմանաւ, որ տեսուչը լաւ նկարագրի տէր մէկն ըլլայ։ Շէնքեր կ'շինուին Վանքի մէջ և լմնալու վրայ են։ Բայց դեռ շատ տղաք կ'թափառին փողոցները։ Անոնց սնունդ և յառաջիկայ ձմրան անոնց համար պատսպարան հայթայթել, հրապարակի գլխաւոր հարցն է Վանի մէջ։ Տենդ եւ տեսակ մը վտանգաւոր փորահարութիւն՝ տիրող հիւանդութիւններ են։ Հիւանդանոց մ'եւս նոր հաստատուեցաւ Հայոց եւ միսիոնարաց խառն գործակցութեամբ։ Արդէն աղքատ ժողովուրդը բաւական տառապանութեամբ կ'օգտուի իր աղքատներուն. իսկ հարուստ դասակարգը բոլորովին անտարբեր մնացած է և կ'մնայ։»

—

Խարբերդէ կ'գրեն մեզ. «Տեղւոյս Առաջնորդարանն հասած է Ակնայ Առաջնորդարանէն նամակ մը, որուն մէջ շնորհակալութեամբ յիշուելէ վերջ կուսակալ Րէուֆ պէյի մարդասէր տնօրինութիւնն, որով կարօտ ընտանեաց ցորենի բաշխում եղած է, կ'պարզուի քաղաքին մէջ տիրող թշուառութեան նկարագիրը։ 600 տունէ աւելի կան, որ տեղի ունեցած այս ու այն օժանդակութեանց հակառակ, անմիջական խնամարկութեան կ'կարօտին, մանաւանդ մօտեցող ձմռան առթիւ. կ'խնդրուի Մր. Կէյթսի հետ խորհրդակցիլ այս մասին և պէտք եղած ուշադրութիւնն հրաւիրել։

—

ԿԵՍԱՐԻԱՅԷ կրգրեն մեզ.—«Եգիպտոս բնակող Մելրոնեան եղբարք, վերջերս նորէն 55 օսմ. ոսկոյ գումար մը ղրկած են, կէսը Կեսարիոյ Կիւմշեան վարժարանին և միւս կէսը նոյն քաղաքի աղքատաց հաստատութեան համար։ Կիւմշեան վարժարանը 10—15 տարի է իվեր մինչև 5—600 աղքատ ուսանողներ ունեցած է իր գրասեղաններուն վրայ և 40-50 շրջանաւարտներ տուած է ազգին։ Աղքատաց հոգաբարձութիւնն ալ որ հաստատուած է 15—20 տարի է իվեր, Կեսարիոյ գործունեայ և մարդասէր ոգւոյն յատուկ մէկ ապացոյցն է։ Շնորհակալութեան արժանի են ուրեմն Մելրոնեան եղբարք։

—«Կեսարիոյ Ս. Կարապետ վանքին մէջ Առաջնորդին ջանիւք բացուած Մանկանոցին նուէրներ կուգան ամէն կողմէ։ Զատեր տղայ մը երրորդերն և 4—5 տարուայ խնոչկն ալ մէկտեղ կ'ղրկին։ Առաջնորդն ալ խիւրարէն անոր տղայ մը կը ձանագրէ և լուսանկարը կըղրկէ պաշտպանին։ Այս Մանկանոցի աշակերտաց թիւն հասած է 40 ի»։

—

ՃԻՋՈՒՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ.—Ինչպէս ծանուցինք, Կայս. Իրատէի մը համաձայն յանձնաժողով մը կազմուած է՝ հայաբնակ գաւառաց մէջ անցեալ տարիներու խառնաշփոթութեանց միջոցին քանդուած մզկիթները, դպրոցներն, եկեղեցիներն ու վանքերը վերաշինելու։ Այս յանձնաժողով, կըսէ Լ. Հէրալտ, որուն պիտի նախագահէ Բ. կարգի զօրավար մը, վեց անդամէ պիտի բաղկանայ, ասոնց երեքն իսլամ են՝ մին Ներքին գործոց պաշտօնատունէն, մին՝ Շէյխ իւլ-Իսլամի Դուռնէն և միւսը՝ Կրթական պաշտօնատունէն. իսկ մնացեալ երեքէ մին Հայոց մին՝ Հայ Հռոմէականաց և միւսն՝ Յունաց պատրիարքարաններէն։ Յունաց Պատրիարքարանին կողմէ անդամ կարգուած է Ժ. Սուլիոտիս էֆ.։ Յանձնաժողովոյ անդամք ցորչափ տևէ պաշտօննին, 5000-ական ղրշ. ամսաթոշակ պիտի ստանան։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՃԱՊՈՆԻԱ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐ.

—

Ճապոնեան ևս կամենում է միջամտել արևելեան խնդրին։ Այդ երկրի «Սեկայ-Նօ-Նիպպօն» թերթը ահա թէ ինչ է գրում։

«Այն ժամանակուանից երբ Ճապոնիան մտաւ Եւրոպական եօթ պետութիւնների շարքը, «Եւրոպա» և «Ասիա» բառերի հասկացողութեան մէջ եղած զանազանութիւնը դադարում է։ Ասիան նոյնպէս ինչպէս հետաքրքրուել Անգլիայում, Ռուսիայում Ֆրանսիայում և նոյն իսկ Բալկանեան թերակղզում ունեցող դէպքերով, որպէս Եւրոպան հետաքրքրվում է Պարսկաստանում, Ճապոնիայում և Չինաստանում եղածներով։ Ներկայէք—աւելացնում է թերթը—թող տուէք, մենք էլ ասենք մեր կարծիքը և կամենում ենք տեսնել այն, ինչ որ ուրիշները տեսնում են. այսինքն այն, ինչ որ կոչվում է համաշխարհային դրամա և որի գլխաւոր արարուածները տեղի են ունենում Եւրոպայում։ Մեզ ասում են որ, երբ Ռուսիան ծագեցրեց Լեա-դունեկի թերակղզու մեզնից խլելու հարցը, Ճապոնիան շահ ունեցող պետութիւններից յետինն էր, որ իմացաւ այդ մասին և այն էլ պատահաբար իմացաւ, որովհետև Ռուսիայի այդ քայլի համար մեզ իմաց տուաւ մեր Համբի դեսպան Տակախարան։ Լաւ է որ գեռ իմաց տուաւ։

Այժմ Եւրոպայում խաղացվում են համաշխարհային դրամայի արարուածները, որոնք կարող են ապագայում ահագին նշանակութիւն ունենալ։ Բայց ինչ գիտենք մենք այդ հարցի մասին, որ այնքան յուզում է եւրոպական պետութիւնների հանգստութիւնը և որ կոչվում է արևելեան հարց։

Մեզնում ասում են թէ Ճապոնիան շահ չունի դրա մէջ, ինչպէս որ էլ վճռուելիս լինի խնդիրը։ Ուղղակի շահ չկայ, այո, բայց կողմնակի՝ կայ և շատ կայ։ Միթէ այն արդէն, որ այդ հարցը կենտրոնացրել է իր վրայ եւրոպական պետութիւնների ուշադրութիւնը հեռացնելով հեռու—արևելեան գործերից՝ մեզ համար միևնոյնը չէ։ Եւ ինչն է խանում մեզ ունենալ Արեւմուտքում մեր ականջներն ու գրիչները, որոնք իրենց ժամանակին յայտնէին մեզ թէ ինչ է կատարվում այդ Արևմուտքում։ Դիւանական խնայողութիւն։ Բայց մինթէ մի քանի հարիւր հազար այլ իէն (փող) կարող է նեղի լծել մեր գանձը։ Եւ վերջապէս դա կարևոր է. իսկ կարևորութեան առաջ՝ ամէն մի զատողութիւն պիտի երկրորդ պլանի անցնի։ Այս բոլորը մենք գրում ենք ի նկատի ունենալով այն վէճը, որին պիտի ենթարկուի կոմս Օկումի պնդումը, թէ պէտք է Ճապոնեական ներկայացուցիչ ունենալ Կ. Պոլսում։ Մենք չենք փախնում ասելու, որ կոմսը յաղթութիւն կըտանի։ Միայն այն միտքը թէ այդպիսի կարևոր հարցերը վճռի են ենթարկվում—մեզ տխրեցնում է, ցոյց տալով թէ որքան նեղ է դեռ ևս մեր քաղաքագիտական աշխարհայեցողութիւնը»։

Խմբագիր-հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Գոլովինսկի, Վորոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամէն օր, բացի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռական հ.

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

ԿԻՆ ԲԺԻՇԿ Ա. Ի. ԹՈՒԴԵՆԿՕ—10½—11½ ժ. կանանց և երեխայոց։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ.—11½—12 ժ. կանանց հ.

Ի. Փ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի. քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ս. Դ. ԶՈՒՐԿՕ.—1½—2½ ժ. ներքին և միզասեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. ներքին երեխայոց հ.

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—6—6½։

Ա. Ն. ՇՊԱԿՈՎՍԿԻ—6—7 ժ. ներզգային (էլեկտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.

Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խուզարկուական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ։

ՎԻՐԱԲՈՒԺԱԿ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Մշտական մահճակալների բաժնով

ԴՕՔՏ. Ի. Մ. ՄԱՐԿՈԶՈՎԻ

(ՆԱԽԿԻՆ ԴՕՔՏՕՐ ԿԱՐՊԵՋԵՆԿՈՑԻ)

Սօլօլակ, Գանովսկայա փողոց № 3,
Հիւանդների ընդունելութիւնն ամէն օր։

Ի. Մ. ՄԱՐԿՈԶՈՎ, ժամը 10—12 միզային օրգանների վեներական և սիֆիլիսի հիւանդութիւնների։

Փ. Վ. ՉՈՒԴՆՈՎՍԿԻ, ժամը 12½—2, վիրաբուժական և մէզի հիւանդութիւնների, (երկուշաբ., չորեքշ., ուրբաթ և կիւրակէ օրերը)։

Գ. Ի. ՕՍՏՐՈՎՍԿԻ ժամը 12—1, ներքին հիւանդութիւնների և ծաղկի պատուաստումն։

Ս. Լ. ԲԵՆԿԼԵՎՍԿԻՑ 12—1. ականջի, քթի, կոկորդի և վիրաբուժական հիւանդութեանց (երեքշ., հինգշ. և շաբաթ օրերը)։

Ս. Բ ԳՐԵՏՑԻՆԳԵՐ 12½—1½, մասսաժ և բժշկական մարմնամարզութիւն, բժիշկների թոյլտուով (երկուշ. չորեք. ուրբաթ) վճար փոխադարձ համաձայնութեամբ։

Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆ, ժամը 12—1, մանկաբարձական և կանանց հիւանդութեանց

Գ. Ա. ՔՈՉԱՐԵԱՆՑ ժամը 11—12, կաշուի, վեներական, սիֆիլիսի և մեզային օրգանների հիւանդութեանց երեքշ. հինգշ. և շաբաթ)։

Ն. Տ. ՄՈՒՂԻՆ, ժամը 12½—2, ականջի, կոկորդի և քթի հիւանդութիւնների (երեքշ. չորեքշ. և ուրբաթ օրերը)։

Ատամնաբոյժ Ա. Ե. ՖՕՆ-ԲՐԵՆՆԷՐ, ժամը 11—12, ատամնաբուժութեան, նաև ատամ մաքրելու, լցնելու և արհեստական ատամներ դնելու։

Ա. Ն. ԳԵՆՑ, դեղագործութեան մագիստրոս, մանրադիտակով քիմիական և բակտերիօլոգիական հետազօտութիւններ է կատարում — հետազօտութիւն մէզի, խորխի, արեան, կաթի և այլն։

Հիւանդների ցանկութեամբ համախորհուրդ է լինում։ Բուժարանում կան բաժանմունքներ՝ մարմնամարզական — մասսաժի և ոսկրաբուժական։

Խորհրդի համար վճարը, ինչպէս նաև ծաղկի պատուաստման համար, 1 ռուբլի է։

Աղքատների համար ձրի է։ Համախորհուրդների, անդամահատութեան մասսաժի, մշտական մահճակալի, էլեկտրականութեան, լոգարանի և ցնցուղի համար առանձին համաձայնութիւն պէտք է կայացնել։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԵՐՍԻՍԵԱՆ հայոց հոգևոր դպրոցի հոգաբարձական խորհրդարանում նոյեմբեր, ամսոյ 12 ին, երեկոյեան 8 ժամին, լինելու է ԱՃՈՒՐԴ (առանց կրկնաճրդի) կապալով տալու չորս տարի ժամանակաւ ի 1 էն յունվարի, 1898 ամի, դպրոցապատկան կալուածքը հանգուցեալ Աւետիք Փիրալեանցից ընծայած, որը գտնվում է Սօլդատսկի փողոցում ընդ №№ 6 և 11։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամէն օր, բացի կիւրակէից և տօներից, առաւօտեան 11-12 ժամը։ (3—2)

ՆԵՐՍԻՍԵԱՆ հայոց հոգևոր դպրոցի հոգաբարձական խորհրդարանում նոյեմբեր ամսոյս 12-ին երեկոյեան 8 ժամին լինելու է ԱՃՈՒՐԴ (առանց կրկնաճրդի) կապալով տալու չորս տարի ժամանակաւ ի 1-ին յունվարի 1898 ամի, դպրոցապատկան կալուածքը բաղկացած ա) 24 սենեկից, որ այժմս «Օդեսա» հիւրանոցն է և բ) երեք խանութից։ Այդ կալուածքը գտնվում է 3 րդ մասում քաղաքիս, Սալդատսկի բազարում։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատանը, ամէնայն օր բացի տօներից, առաւօտեան 10—12 ժամը։ (3—2)

Ամսոյս 8 ին, շաբաթ օրը, ժամի 12-ին, լինելու է ԱՃՈՒՐԴ (առանց կրկնաճրդի) Աւետեաց եկեղեցւոյ երկու խանութները, որ դը տանվում են Միջի փողոցումն եկեղեցւոյն կից՝ աճուրդով տալու։ Ցանկացողները կարող են տեղեկանալ պայմանների մասին ինձանից ամէն օր, 12—2 ժամ, եկեղեցւոյ գաւթում, երէցփոխանական սենեակում։
(2—2) Երէցփոխան՝ Զ. Կառալեանց

ԲԺՇԿԱՊԵՏ
Ն. Զ. ՌՈՒՄԻԿԵԱՆՑ
նախկին բժիշկ Ս.-Պետերբուրգի երեխանց Կայսերական ապաստանարանի, ընդունում է երեխանց եւ ներքին հիւանդութեանց համար առաւօտեան 10—11 ժամը։ Գանովսկայա № 29, տուն իշխանուհի Թումանովայի։ (10—5)

Մամուլի տակն է և մինչև յունվար ամիսը լոյս կըտեսնի
—Մ Ի Ջ Ի Ն Շ Ր Ջ Ա Ն—
ՈՒՍՈՒՑՈՒՄՆ
ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿՐՕՆԻ
Ուղեցոյց հայ կրօնուսույցների համար—հատոր չորրորդ։
Սահակ Քահ. Սահակեանց
(10—7)

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ
ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍՆ
Աշխատութիւն
ՌԺ. ԼԵՒՈՆ ՏԻԳՐԱՆԵԱՆՑԻ
Ծախվում է Թիֆլիզում կենդրոնական գրավաճառանոցում և Երևանում, Էմին Տէր-Գրիգորեանցի խանութում։
Գինն է 1 ռուբլի. (3—3)

ՄՈՍԿՈՒԱՅԻ ԵՒ ԹԻՖԼԻԶԻ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ
ստացուած է վաճառելու համար, բարեգործական նպատակով լոյս ընծայած գրականա գիտնական ժողովածուն

„БРАТСКАЯ ПОМОЩЬ
ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНАМЪ"

(ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՎՆԱՍՈՒԱԾ ՀԱՅԵՐԻՆ)

Գիրքը ստուար հատոր 950 մեծադիր երեսներով, մաքուր տպագրութեամբ, Յովհաննէս Այվազովսկու 4 առանձին նկարներով, Վ. Սուրէնեանցի գծանկարներով և 150 այլ նկարներ (որոնց թւում 36 պատկեր, իսկ միւսները Թիւրքաց Հայաստանի, Կովկասի և այլ տեսարաններ ու տիպեր) և հեղինակների ձեռագիրներով (աֆտօգրաֆ)։

Ժողովածուի մէջ կան 100 ոտանաւոր և արձակ յօդուածներ, որոնք բաժանուած են մի քանի մասերի։ Փոքրիկ նախաբանի մէջ հաւաքած են այնպիսի յօդուածներ, որոնք վերաբերվում են ժողովածուի նպատակին. այսինքն օգնութիւն տալ տառապեալ հայերին—գաղթականներին և Ռուսիա ապաստանածներին, այլև որբերին, որոնք կան հայրենիքում։ Այդ յօդուածների թւումն է Մ. Ա. Ֆօյմարսեմի «Հայ եղբայրներ» յօդուածը, ինքնաձեռագիր (ֆակսիմիլէ) նամակ Լ. Ն. Տոլստոյի. Աճարոնեանի «Փալադ-Փուրգուննի» պատկերը, «Ինչպէս ազատել հայ նահատակների որբերին» և այլն։

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Այս առաջին մեծ բաժանմունքը երկու է արուած. առաջինում կան ա) Ոտանաւորներ Կ. Ռ. Ա. Մ. Ժէմչուժնիկովի, Կ. Դ. Բալմոնտի, Փ. Ե. Կորշի, Ա. Ա. Բարովիկովսկու, Վ. Մ. Գեօսէնի, Իվան զա Մարիայի և ուրիշներ։ բ) Պատմուածքներ, Դ. Ն. Մամին-Սիբիրեակի, Կ. Ս. Բարանցեվիչի. Վ. Գ. Կորօլենկոյի, Ն. Դ. Տելեշովի, Ս. Ատախովի, Ա. Ա. Վեսելովսկու, Թարգմանութիւն սանսկրիտական դրամա «Վիկրամօր վաշի» պրոֆ. Վ. Փ. Միլլերի և ուրիշներ։ գ) Թղթակցութիւններ, Բելինսկու, Հերցէնների, Մ. Ե. Սալտիկովի։ դ) Գիտնական-ժողովրդական յօդուածներ պրոֆ. Ն. Ն. Միլիւկովի—«Գրանովսկու համալսարանական ընթացքը»։ Ի. Ռ. Տարխանովի, «Գիտութեան երևակայեալ սնանկութեան մասին»։ Ն. Ա. Կարըշեվի—«Ազգային տնտեսութեան պատմութիւնից»։ Մ. Կովալևսկի «Գիւղական շարժում Կովկասում»։ Խալաթեանց «Սասունցի Դաւիթը», Կ. Ա. Տեմիրյազովի «Լուսանկարը և բնութեան զգացմունքները»։ Ն. Ա. Ստորօժենկոյի «Հանճարաւոր թշուառը» և ուրիշներ։ ե) Գիտնական հետազօտութիւններ, ճանապ. նկատողութիւններ։ Կոմուհի Պ. Ս. Ուվարովա—«Ճանապարհ. Պշավիայում և Խեվսուրիայում», Վ. Դ. Սպասովիչ «Զարչարանաց շաբաթը Օրեր Ամօրգասում», Բէլա. Ուխտոմսկու «Բուդդա-հայա և Կալկաթայի հայերը», մի գլուխ Թագաւոր Կայսեր ճանապարհորդութիւնից՝ արևելքում։ Դիօնէօ «Դարձոնը Սիբիրում», Լ. Մսերեանի—«Երկու գիտնական վայրեր» (Վեներայի և Վիեննայի Միթիթ. միաբանութիւնը) և ուրիշներ, զ) Գեղարուեստ եւ Կրիտիկա, Վերեշչագինի—«Նկարչի յուշատետրից», Ս. Դ. Մախալովից—Համլէտ ողբերգութեան վրայ՝ ֆանտազիա», պրոֆ. Մ. Լ. Վեսելովսկու—«Զգայուն և ցուրտ։ Պատմութիւն, կենսագրութիւն, յիշողութիւններ, Մ. Լ. Վենեվիտինովի, «Օրագիր օրէնսգրութեան գիւղացիների ազատման», Բելօզերովի—Նոմս Լօռու-Մելիքեան, Ն. Ն. Զլատովրատսկու—«Գրական յիշողութիւններից», Վ. Ա. Գոտտօ «Գեներալներ Լազարեան և Չելկովնիկեան և ուրիշներ», Կոէվսկու գեներ. Տէր-Ղուկասեան, Դ. Ջանշեանի—«Փայլուն էջեր ռուսաց պատմութեան մէջ», է) Հրապարակախօսութիւն, Վ. Ս. Գոլցեվի—«Լէօն Բուրժուա, Համերաշխութեան մասին», Բուկվա—«Հայրենասիրութիւն և հայրենասիրութիւն»։ Գ. Սիգմա—«Ազգայնութեան մասին» և ուրիշներ։ Բացի դրանից, բաժանմունքի մէջ կան յօդուածներ Հ. Ալիշանի, Դ. Քանանեանի, Ն. Ա. Վեսելովսկու, Ա. Ն. Սալօնովի և այլ յօդուածներ, որոնք վերաբերում են հնախօսութեան, աշխարհագրութեան, հին հայկական և նոյնպէս նոր գրականութեան և այլն։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Երկրորդ բաժանմունքի մէջ ի միջի այլոց կան հետևեալ յօդուածները. պրօֆ. Լ. Ա. Կամարովսկու „Թիւրքիայի բարենորոգութեանց մասին», Գ. Ի. Բելեաէվի «Փոքր Ասիայ Թիւրքաց զոհերի մի նամակը» և նոյնպէս քաղուածքներ «Դեղին Գրքից» և ուրիշ աղբիւրներից, որոնք ծանօթացնում են Թիւրքահայոց վերջին տարիներում կրած սոսկումների հետ։

ԳԻՆՆ Է 5 ՌՈՒԲԼԻ, ճանապարհածախսով 5 ռ. 90 կ.

Բաժանորդ գրաւողները գրքերը ստանում են իրանց գրուած տեղերում։ Օտարաքաղաքացիներին փոխադրութեամբ՝ վերադիր վճարով, ստացվում է 4 ֆունտի ճանապարհածախս հասարակ թղթով գրքի համար և 6 ֆունտի՝ շքեղը։ Ձեռք թղթով օրինակները չի ծախվում, որովհետև բոլոր սպառուել են բաժանորդագրութեամբ։

Հրատարակութեան նպատակին համակրող թերթերին՝ խնդրըվում է արտատպել սոյն յայտարարութիւնը։

Խմբագրող—Գր. ՋԱՆՇԵԱՆ։

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ (Տփխիս)

ՍՏԱՑՈՒԵՑԱՆ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՆՈՐ ԳՐՔԵՐԸ.—

	Ռ.	Կ.
Թ. Ա. Խոհարարուհի, կերակուր պատրաստելու ձեռնարկ. 1897 թ. գինն է.	—	40
Ս. Աւետիքեան Բանանցեցի. Սանիտարնի. 1897 թ. գինն է.	—	20
Ն. Տէր-Կարապետեանց. Խաչատուր Աբովեան, 1897 թ. գ.	—	60
Ս. Ձահազիզեան. Ամառնային Նամակներ. 1897 թ. գ.	1	50
Գ. Կանէստրինի. Մարդաբանութիւն, թարգմ. Հ. Լալայեան 1897 թ. գ.	—	40
Ծոցի օրացոյց ու էջմիածնի տպարանի.	—	20
Աղաֆիրեան Գ. եպ. Կրօնական-բարոյական խորհրդածութիւններ, 10 հատ. Վաղ. 1897 թ. իւրաք. գինն է.	—	20
Տէր-Միքելեան. Հայաստանեայց առաքելական ուղղափառ սուրբ եկեղեցին և իւր սուրբ կարգը, Վաղ. 1897 թ. գ.	—	60
Գիւզօ ի. Դաստիարակութիւն և ժառանգականութիւն Վաղ. 1897 թ. գ.	—	60
Նազարեանց Էմմ. քահ. Պարզ քարոզներ, ժողովրդական ընթերցանութեան համար. Զ. գիրք. գինն է.	—	20
Խալաթեանց Գր. Ցիշատակարան աղէտից Գրիգորի Խլաթեցւոյ պատմական վիպասանութիւն Վ. 1897 թ. գ.	—	15

(5—4)

Дозволено цензурою, Тифлисъ 6-го Ноября 1897 года. Տպարան Մնացական Մարտիրոսեանցի։ Типографія М. Мартиросянца. На Михайловской ул. № 81.